— Ցեսաք որ, չին ուհիմի մեղապարաները, յանցապարաները մէկիկ մէկիկ քաշուեցան Պօլիսէն, ալ աւելի կասկածներ երաւիրելով իրենց վրայ, Օրմանեան այդ ընել չուզեր երբէք և երբէք, իմ փափաքս է հօս մնալ, հոս տանս չորս պատերուն մէջ, միշտ կազմ ու պատրաստ տալու ինձմէ պահանջուած հաշիւները և բացատրութիւնները որոնք միայն պիտի կրնան սրբել մուրը ճակտիս որ քսել կը կարծեն կորդ մը շահամու և քիւնինդիր լզրճուկներ: Պիտի ուզէի նոյն իսկ երեսփոխանական պատկանելի տաեանին առջեւ պաշտամնել ևս զիս և համոզել զիրենք թէ Օրմանեան կարելին չէ ինայած յօգուա Ազգին և ի փրկութիւն անմեղ հոգիներու: Եւ գիտցիր որ մը պիտի համնիմ նպատակիս:

— Զեր պատրիարքութեան օրերուն զԶեզ ինկար-

կողներու այցելութիւնը կը նդունի՞ք ստէպ, անոնք հեմա ալ կը փնտռե՞ն արգեօք ձեզ . . . :

— Իմ պաշտօնավարութեանս օրերուն երթէք չեմ խնկարկուած սիրելիս, նոյն իսկ է՞ն մօտ բարեկամներս իրենց գործին յաջող ելքին համար երեսիս ինդացած են, իրենց գործը քալեցնելու համար ձեռքիրս համառած և սողոսկած են շուրջու, որոց ամենուն ալ կարողութեանս ներածին չափ հասած եմ և կատարած իրենց ինսթիբուլը, գիտնալով սակայն թէ իրենց սիրոյ այդ չսփազանց արտայատութիւնը լոկ և սոսկ շահու, անձնական գոհացման արդիւնքն է:

— Ներեցէք Սբբաղան աւելցուցի, հարցում մ'ալ և վերջացնեմ, զ՞նկ անհանգիստ չընելու համար գիշերուան այս յառաջացեալ ժամերուն մէջ ուր գիտեմ թէ հանգիստի պէտք ունիք: Պիտի ուզէ՞ք վրէժ լուծել ձեր թշնամիներն որոնք ասոքան հալածեցին զջեղ և Զեր պատիւն հետ խաղացին:

— Կը ցաւիմ որ կը կասկածիս բարեկամս, և կը վարանիս իմ երկայնամքութեանս վրայ: Մտածում որ կը ասնջէ իրիջս, և ցաւը որ կը կեղեքէ հողիս, այն զըժուար կացութիւնն է որուն պիտի հնթարկուին ամէն անսնք որոնք զիս հալածել փորձեցին, երբ արդարութիւնը և ճշմարտութիւնը գայ ուղղել պլատը մտքերը: Թողունք պահ մը իմ անձս, և խորհինք թէ իրենց խիղնը որպիսի՝ ծանր ասնջանքներու պիտի մասնուի, երբ վաղը Օրմանեանի վերագրուած բոլոր զրպարտութիւնները ջախջախուին: Արգեօք այդ մարդիկը ի՞նչպիսի ծանրածանը և մաշող խղճի խայթերու պիտի մասնուին: Եւ ըստիմ թէ այդ օրը շատ հեռու չէ:

Ժամը կէս գիշերը անցած էր երբ հասմեշտ առնելով մեկնեցայ տունէն, զողի մը վախկոտ ակնարկները

սիռելով չորս դիս որպէսզի մի գուցէ հակառակորդներու կողմէ: Ահա ենթելովիւս որ նոյնութեամբ պատմեցի, առանց իմ կողմէս բառ մը աւելցնելու, ըստ մեր բարեկամը:

\* \* \*

Օրմանեանի խօսքերէն որչափ կուահեցինք, ինքը բոլորովին հակառակը կը պնդէ եղած կասկածներուն և խօսքերուն, որոնք զինքը կ'ամրասանեն իբր Ազգին թշնամին:

Մենք իբր եզրակացութիւն սոչափը միայն կրնանք ըստի թէ, իզմիրլեանի անկումէն վերջ, երբ Բւնապետութիւնը և կառավարութիւնը անյագ վագրի մը պէս իր ճիրաններուն մէջ առած Ազգը՝ անխնայ կը յօշուէր ու կը սպասնար, կեղեքեալ ազգին և արենարբու բըսնակալութեան միջեւ նիզվիր կրօնապետ մը պէտք էր որպէսզի իր ճիզվիթութեամբը կարենար երկու հակառակ եղբերու առածգականութիւնը մեղմել և երկուքին միջինը գանելով օրորել տարիներու ընթացքին մէջ:

Եւ ահա այդ նիզվիրը եղաւ Օրմանեան:



Տար.	Օր	ԿԼՈՒՆ	ՍԵՊՏԵՄԲԵՐԻ		ՏԱՄԱԶԱՆ	Տար.
			ՕՐ 30	ՕՐ 30		
14	1	Գ. Սըրսց մարդարէիցն եղեկելի, եղբի և ջարարիայ չօրն Յովշաննու Մկրտչին: Յն, Ալմէնի Ախւակեցի. եկեղեցական տարեմաստ է նոցա: Լու* Խաչվերաց:	Հ. 188			
		◎ Խն. Լու ժամ 22, րոպէ 52 Հողմալար ամպ եւ անծրեւ				
15	2	Պ. Պահք: ՏՃ. Բամազան (օր 30):	Հ. 188			
16	3	Ե. Սըրսցն Յովշաննու Կարսագետին և Յովայ արդարոցն: Լու. Խօմն ցաւսց կուսին: Հր. Թշրի (օր 39), և Տարեմաստ 5670 նահանջ թուտկանի, և առն է նոցա աւուրս երկուս:	Հ. 188			
17	4	ՈՒԲ. Պահք:	Հ. 188			
18	5	Շ. Եփկոյ Ա. Ժողովոյն երեք հարիւր ութեւտասն հայրագետաց: Տոմ. Հոսի (օր 30):	Հ. 188			
19	6	✳ Ա. Պահք. Դ. զինի Վերափոխման: Բարեկենդան պահոց Ա. Խաչի: Յն* Միքայէլի հրեշտակագետին. ի գիւղորէս առն վասն արտօրէից: Հր. Ծոր վասն սարսնման Դոթողիայ որդւոյ Աքիկամայ:	Հ. 188			
20	7	Պ. Ա. օր պահոց Խաչի:	Հ. 188			
21	8	✳ Գ. Բ. օր պահոց Խաչի: Ծնունդ Ա. Աստուածածնի նի յինոյիէ: Յն* Ծնունդ Ա. Աստուածածնի: Լու. Մատթէոսի աւետարանին:	Հ. 188			
22	9	Գ. Դ. օր պահոց Խաչի: Յն. Յովակիմայ և Ամսոյի ծնողաց Ա. Աստուածածնի:	Հ. 188			
23	10	Ե. Դ. օր պահոց Խաչի: Յայոմ. Հոսի (օր 30):	Հ. 188			
		◎ Առ. Քռ. ժամ 2, րոպէ 25 Ամպամած եւ խոնաւ				
24	11	ՈՒԲ. Ե. օր պահոց Խաչի: Աշնանամուտ և հասարակած և լինի տիւ և գիշեր հաւասար: ՏՃ. Խթիսալը հարիթի, որ է աշնանային ամիսը, և սկիզբն նուազութեան ջուրցն նեղոսի (Նիւ միւարէր):	Հ. 188			
		◎ ի Կշխոն ժամ 00, րոպէ 40 ՏՃ. Պուրմի Միզան				
25	12	Շ. Տօն եկեղեցւոյ ի Խաւակատիս սրբոյ Խաչի: Խաւակատիք: Հր. Թիփուռ. առն քառութեան, որ է Զօրապ պայրամը և է նոցա ծոր մեծ:	Հ. 188			
26	13	✳ Ա. Պահք. Խաչվերաց :	Հ. 188			

Տար.	Օր	ԿԼՈՒՆ	ՍԵՊՏԵՄԲԵՐԻ		ՏԱՄԱԶԱՆ	Տար.
			ՕՐ 30	ՕՐ 30		
27	14	✳ Պ. Տօն Խաչի: Յիշտատակ մեռելոց: Յն. Խաչվերաց պահք է նոցա պարօր:	Հ. 188			
28	15	Պ. Տօն եկեղեցւոյ:	Հ. 188			
29	16	Պ. Պահք: Տօն եկեղեցւոյ: Լու. Մկրտչէի հրեշտակ:	Հ. 188			
		◎ Լր. Լու ժամ 21, րոպէ 8 Հողմային պարզութիւն				
30	17	Ե. Տօն եկեղեցւոյ: Ա. Թիբայ (օր 30): Լու. Տօն Սըրսցն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Հր. Առքքօթ, տօն աղաւարահարաց, որ է Գոմիշ պայրամը, 9 օր:	Հ. 188			
1	18	ՈՒԲ. Պահք: Տօն Խաչի: Լու. Հոկտեմբեր:	Հ. 188			
2	19	Բ. Տօն Խաչի: Լու. Պահապան հրեշտակաց:	Հ. 188			
3	20	✳ Ա. Պահք. Բ. զինի Խաչի: Բարեկենդան պահոց Վարդապայութեայ Սըրսց Խաչի: Ա. Պահք Սըրսց Խաչի:	Հ. 188			
4	21	Պ. Պահք: Սըրսցն Մատմասոյ, Փիկիկափմանի և Սիմեոնի Սիւնակեցին: Լու. Փրանկիսկոսի Ասփացւոյն:	Հ. 188			
5	22	Գ. Պահք: Սըրսց Կուսանացն Փերբանեայ և Մարիամեայ և վկայուհւոյն ծուշմասյ գատեր մեծին Վարդապայութեայ:	Հ. 188			
6	23	Դ. Պահք: Յն. Յղութիւն Յովշաննու Կարսագետին:	Հ. 188			
		◎ Վր. Քռ. ժամ 14, րոպէ 55 Ալուրելիի օդ				
7	24	Ե. Պահք: Սըրսց հայրագետացն Բարազամու, Անթիմիսի և երանափ: Յն. Գիւտ պատկերի Ա. Ասճին:	Հ. 188			
8	25	ՈՒԲ. Պահք: Լու. Պիհմիթայ Կուսին:	Հ. 188			
9	26	Շ. Սըրսցն Գեորգու զօրավարին, Ագոկտոսի և Ռոման նոսի երդեցողին: Յն. Անձումն Յովշաննու աւետար:	Հ. 188			
10	27	✳ Ա. Պահք. Դ. զինի Խաչի: Տօն Վարագոյ Սըրսց Խաչի: Առաջին կիւրակէ Խօմն շարաթուց:	Հ. 188			
11	28	Պ. Սըրսցն Դաւթի Դիվեցւոյն, և վկայիցն Դամբէսոփ: Հ. 188				
12	29	Գ. Սըրսցն եւստաբէսոփ, և կիսն Թէսփիստեայ և Երկուց որդւոցն, և կուսանացն երմնեայ և նեկատրնեայ:	Հ. 188			
13	30	Դ. Պահք: Յն. Տօն Սըրսցն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Լու. Եղուարդոյ Թագաւորին: ՏՃ. Գուշի կիմբէ Փուրթունոտուր:	Հ. 188			

## ( ပြည်မြို့တော် )

## Utopia

Մարմարան կարծես սովալլուկ շան մը պէս կ'ոռ.  
նար կէս գիշերուան մօտ : Դիակներու ծարաւի ծովը  
կարծես բարկութենէն փրփուրներ կ'արձակէր, որոնք  
մեռելաթաղի պատրանքը կուտային իրնոյ ճերմակ  
պղպջակները խառնելով սեւ ջուրերուն :

Հեռուն՝ կղղիներու ցանուցիքիր լոյսերը, մութ երիշ  
նակամարին վրայի աստղերուն պատրանքը կուտային,  
որոնք մերթ կը մարէին, մերթ կը վառէին յաջորդա-  
բար: Խոնաւ օր մը, հովոտ ու մրրկայոյզ, տեղատա-  
րափ անձրեւ մը կսպառնար, և արդէն ցասկոտ ծովը  
յաղթելու համար յորդառատ անձրեւէն ուրիշ բանի չէ՞լ  
սպասուեր:

Հէյպէլիի կոնակի կողմը, ձիւդ Յունաց Աստուածաբանական վարժարանին վարօքը, ծովեղբին մօտ, պղտիկ մակոյկ մը՝ որ շիւդի մը պէս կը խաղար աւազներուն վրայ փշրուող ալիքներէն, կազմ ու ասասաստ կո իհանար:

Քիչերուան ժամը եօթն էր :  
Բարակ բոյիօ մը հազած , սեւ բանթալոնով , գլւ  
լուխը բաց երիտասարդ մը՝ արագ արագ քալելով մա-  
կոյկին մօտեցաւ , չուվանը քաշեց , անդամ մը ետին  
նայեցաւ , և իրեն հետեղ՝ շարօնթին մէջ ամփոփ կին  
մարդասառերի մը ձեռքէն բռնելով մակոյկը առաւ ,  
յուժկու բաղուկներով հրեց ջուրերուն խաղալիք այդ  
տաշար , թեւճակները անցուց և արագ արագ թիավա-

բելով ալիքներուն մէջ անհետացաւ ան: Մոռթը եր  
քամմնելի ծոցին մէջ կուլ տուաւ այդ երկու հոգիները:  
կեռնակուտակ ալիքներու մանչիւսնին մէջէն դեռ  
կը լոսուէր վերջին հեծկլառքները հարկմին որ կըսէր.  
— ենպէր... ալլահ աշկընա՛...

Մայր և աղջիկ հազիւ ամսուան մը հիւրեր էն,  
որնք ձըլալ օղլու թալէն եկած հաստատուած էն  
չյակէլիի բարձունքը, ուր սովոր են բնակիլ թուրքե-  
ր ամսուանոցի համար:

Ֆէրհունատէ, ամբողջ ձմեռ մը և նոյն իսկ գարնան  
առաջին օրերտն մէջ հիւանդութենէ տառապած ըլլա-  
լուն, բժիշկներու խորհուրդով կղզի բերուած էր օդա-  
փոխութեան համար ու Թաթիմա, որուն ամռախինը շա-  
տոնց մեռած էր զինքը անզաւակ թողլով, նախորդ կը-  
նողմէն ժառանգ այդ աղջկէ, փուշ մը ճնշող բեռ մը  
սեպած էր, ու միմիայն դրամական ճոխութեան հա-  
մար կեղծ ու պատիր սէր մը ցոյց կուտար աղջկան հան-  
չէլ, ան ալ առ երեսս:

այս ալ տու սրսս։ Ֆէրհունտէ, հաղիւ տասն և վեց գարուններու կուն մը, լման լուսնոյ պէս գեղեցիկ, փետուրի մը պէս թէթեւ, հակառակ իր խորթ մօրկանը խատութիւններուն և բռնութիւններուն, իր տկար վիճակին մէջ կը ինդար, կը խօսէր իր թշնամիին հետ, միշտ ներողամիտ ուուզ, մը վերաբերուելով անոր հետ։ Ֆաթմայի միակ և միմիակ փափաքն էր Ֆէրհունտէն ամուսնացնել իր աղջականներէն Ահմէտ պէյի հետ և այսպէսով ապահովել թէ իր ապագան և թէ աղջկանը ժառանգե որ ինդ հաղարը կանցնէր։ Ֆէրհունտէ, խելացի աղջիկ, վիսնաւով հանդերձ իր մօրը սատանայական միտքը ձը-

գած էր որ ան իր ուղածին պէս գործէ, մինչդեռ իւրականութեան մէջ, իր սիրաը տուած ինվէրի, պարզ հարիւրապետի մը մէկ հատիկ տղան, որ ան ալ իր կարգին բուռն սէր մը կը տածէր իր հանդէպ:

Ֆաթմա գիտէր թէ Ֆէրնունաէ խենդի պէս կը սիրէր ինվէրը, բայց իր աղղեցութեան վրայ վստահ, յոյս ունէր որ օր մը չէ օր մը պիտի յաջողէր համնիլ իր նպատակին և ապահովել իր յառաջացեալ տարիքին հացն ու հանդիսաբ:

Իրիկուն մը Ահմէտ պէյ Տէպարքատէրին զբոսարանը լաւ մը գլուխը տաքցնլէ ետքը ինվէրի կը հանդիպի: Երկու ոլիվաները, որոնք միեւնոյն նպատակի համար իրենց Պոլսոյ տուները ձգած Հէյպէլի եկած էին և որոնք գիտէին թէ միեւնոյն աղջկան դարպասը կընէին. երբ իրար եկան, երկուքին ալ գոյնը մոխիր դարձաւ:

Ահմէտ պէյ, որ դեռ իր հօրը դրամովը կը պարծենար և բանի գործի տէր մէկը չէր. երեսուն տարեկան հազիւ կար, կատարեալ բաղդախնդիր մը, որ ինչպէս բոլոր այդ կարգի շփացածներ, իր հօրը մահուանը կըսպասէր տիրանալու համար միջակ հարստութեան մը, որուն միակ ժառանդորդն էր:

Իսկ ինվէր, համաստ ընտանիքի մը պարկեշտ զաւակը, դպրոցէն նոր շրջանաւարտ, քիչ շատ զարգացած, կատարեալ Ժէօն Թիւրք մըն էր, աղատ գաղափարներով կիրթ և քաղաքավար, և որ պաշտօնատան մը մէջ միլազիմ տրանադրուած ըլլալով, տարիներէ ի վեր համեստ ամսականի մը կոպասէր իր ծնողաց բեռ չըլլալու համար:

Ահմէտ պէյ որս տեսնող գաղանի մը պէս առաջին անգամ իր հակառակորդը տեսնելուն յարձակեցաւ:

Էնվէր պէյ ըստ անոր. — Զեզի հետ քիչ մը տեսնուիլ կուղեմ, կը հաճի՞ք պահ մը ընկերանալ մինչեւ վերի չամերը:

Էնվէր որ գիտէր իր գէմինին ինչ աստիճանի և ինչ քառակրենի տէր մէկը ըլլալը, խոհեմութիւնը ունեցաւ մերժել այդ մահասարսուու առաջարկը և առանց կորսնցնելու իր պաղարիւնութիւնը պատասխանեց.

— Զբաղած եմ և կը ցաւիմ որ չպիտի կրնամ ընդունիլ ձեր հրաւէրը...

— Զբաղած էք, հա՛ հա՛ հա՛, ձեզի պէս խլէզ մը ինչ զբաղում կրնայ ունենալ որպէսզի մերժէ հրաւէրս, եթէ կը վախնաս տուառուդ միասին առ...

— Ներեցէք էֆէնափի, խօսք առաւ ինվէր՝ բարկութեան կարմիր այտերուն վրայ. ինչ համարձակութիւն զձեզ մը մզէ այդքան առաջ երթալ ձեր խօսքերուն մէջ, ինձմէ ինչ կուղէք...

— Հայ չոճօխ հայ, չե՞ս հասկնար կոր որ զբօնուլ կուղեմ կոր քեզի հետ, քիչ մը խմած եմ, և գիտցիր որ ամէն անգամ որ այս վիճակը ունենամ, կը փափաքիմ տալիսաւուխներու, հացկատակներու հետ անցնել գլխուս տաք ժամերը...

— Էֆէնափի... շատ առաջ կերթաք կոր, ըստ ինվէր ոսքէն մինչեւ մազերը դողլալով...

— Վա՛յ, բարկացա՞ք պէպէքս, ըստ Ահմէտ ճիւազային ժպիտ մը ու կեզծ խնդուք մը շինելով, ինչ՞ու.

— Ինչ կուղէք ինցմէ և ինչ նպատակաւ կը ծաղրէք վիտ պէյ, ըստ ինվէր յուղեալ շեշտով մը և արցունքները աչքերուն մէջ, ինձմէ ինչ գրէժ կուղէք լուծել:

— Հա հա հա, քու ինչիդ, միթէ վրէժ լուծելը

այդքան տղախակա՞ն կը կարծես, քեզի պէս տղեկէ մը վրէժ լուծելը միթէ պատուաբե՞ր է ինձ պէս մէկու մը համար...

— Ուրիշն...

— Միայն սաշափը ըսել պիտի՝ ուզէի թէ՝ Ֆէրհունտէն իսպառ քաշուիս, որովհետեւ ես պիտի առնեմ ան, Ֆէրհունտէն իմ կինս պիտի ըլլայ...

Ենվէր սկսաւ ջերմէ բռնուածի պէս դողալ, երբ իր սիրուհոյն անունը լուց, գանկին մէջ փոթորիկներ յառաջ եկան և աչքերէն կայծեր սկսան ցայտել:

— Լուցէ՞ք, ձեր ալքոլահոս բերնին մէջ անսնկ անմեղ կոյսի մը անունը տեղ չկրնար ունենալ, աւելցուց Ենվէր քայլ մը առաջ անցնելով, Ֆէրհունտէ կը մեռնի և նորէն ձեր ճիրաններուն խորալիքը և ձեր ակուններուն կեր ըլլար...

— Յաւագա՞ր, ըստ Անմէտ օձի պէս սահմակելով. պիտի ըլլայ, քիչ օրէն պիտի տեսնես, և տեսնելէ դվերջը պիտի համոզուիս; Արդէն ամէն բան գրեթէ լը-մընցած է, ես Ֆէրհունտէին հետ թեւի լուսնի լու-սով չամերուն տակ պատած առենս, դուն հեռուէն ա-զիքներդ պիտի բզքտես, և նախանձը պիտի ուտէ քեզ, պիտի սատիկս և վրադ լացողները միմիայն աշնան տը-խուր անձրևները պիտի ըլլան, ապուշ...

— Դուք ձեր այդ վափաքին չպիտի հասնիք, ե-թէ արգար Աստուած մը կայ մեր գլխուն վրայ, որ երկու քնուսա ալ որտերը կը կարդայ, Ֆէրհունտէն իմ պիտի ըլլայ, իսկ եթէ իմս չըլլայ սեւ հողինը միայն...

— Հա հա հա, պզտիկ սիրանար, որչափ կատար-եալ համոզում, այդ դաղափարդ թող միթարէ քեզ, մինչեւ որ ան իս բազուկներուս մէջը նետուի, անկէ վերջ արդէն ըսի ըլլալիքը...

Այս վերջին խօսքերը դեռ չէր աւարտած՝ երբ Ան-մէտ պէտ հեռացաւ Ենվէրի մօտէն, երթալ շորունակե-լու իր արբեցողութիւնը մինչեւ ուշ ատեն, երբ ֆաթ-մա խօսք տուած էր Ֆէրհունտէի վերջնական որոշումը հազորդել իրեն:

Ենվէր չի հեռացաւ սակայն: Անիկայ գաղտագողի հետեւեցաւ իր ախոյեանին բոլոր շարժումներուն, մին-չեւ իսկ անոր, ֆաթմայի տունը մոնելը:

Խեղճ աղջիկը, արյունքը աչքին, ճնշման տակ էր գազաններուն մօտ, երբ ֆաթմա և Անմէտ, երկու-քը մէկ համոզել կը ջանային, մերթ սիրալիր, մերթ խիստ ու սպառնական խօսքեր թափելով, որպէսզի Ֆէրհունտէ հաւանառութիւն տայ ածուանանալու այդ ճի-ւաղին հետ:

— Տես աղջիկս, տես պէյլդ քեզի որչափ կը սի-րէ, քու մէկ ժխտական պատասխանդ անոր մահուանը պատճառ պիտի ըլլայ...: Քու հանգիստդ, քու ապա-գադ պէտին հատ նիքեահիդ մէջ է, եկուր չէ մըսեր, վերջին զզջումդ վնասէ զատ օգուտ մը չպիտի կրնայ ունենալ, կըսէր ֆաթմա կէս մը ծունկի եկած Ֆէրհուն-տէին մօտը, մինչ Անմէտ սիկառը բերանը, ալքուէն շմորած կը սահմակէր անկիւնը, բաղմոցին վրայ ինք-նիրենը աէր հանդիսանալով այդ չի բացուած կոկոնին:

Ֆէրհունտէ պատ հօրիւին տակէն արցունքի կայ-լակներ կը թափէր անխօս և մասներովը թիւլիւն ծայ-րերը կը պլորէր. ինչպէս սիրտը ներսէն:

— Ֆէրհունտէ, աղջիկս, խօսք տուր, աւելցուց ֆաթմա ձեռքերը աղջկան ծունկերուն վրայ զնելով, ըսէ, տուր հաւանութիւնդ որ երջանկութիւնդ պիտի ըլ-լայ: Տես բոնութիւն չեմ բանեցներ կոր վրադ, քու կամքիդ կը ձգեմ կոր, որովհետեւ գիտեմ թէ ամօթէդ

ու խիպէդ է որ չես կրնար կոր այս ըսել անոր առջեւ որ քու սիրոյդ ծարաւի է . . . : Տես սա կարիճը, տես ինչպէս ախուր ու մեղամախճառ երեւոյթ մը առած է, հոգին բոցերու մէջ է, սիրան ալ երկաթներու տակ . . . : Անոր փրկութեանը դուն պատճառ պիտի ըլլաս, ինչպէս նաեւ մահուանը. քու մէկ խօսքէդ կախում ունի անոր գերեզմանին և կամ արքայութեան բացուիը. մեղքցի՛, ինսայէ անոր երիտասարդ տարիներուն, և մի ուղեր ասանկ կտրիճի մը արիւնը քսել ձակտիդ, որ անքիծ է զիտեմ՝ որովհետեւ ես եմ մեծցուցեր . . .

Ու դեռ պիտի շարունակէր խօսքը, երբ ֆէրհունտէ ելեկտրական հոսանքէ մը մղուածի պէս զլուխը վեր առաւ և յարեց.

Դժոխք, ուե մահ, ուր էք, ինչո՞ւ ձեր դըռները չէք բանար առջեւս որպէս զի հոհ նետուիմ, երկրաւոր տանջանքներու շարունակութիւնը հոդ՝ ձեր ծորցին մէջ շարունակելու: Մայր, մայր, եթէ այսքան կանուխ պիտի բաժնուէիր ինձմէ, զիս ինչու ծնար, եթէ քու մեղքերդ ինծի քաւել տալու համար էր որ զիս աշխարհ բերիր, սիրով պիտի տանէի քու նիրոյդ համար, իսկ եթէ ոչ ինսայէ ինծի, և զիս ու առ մօտդ, ես ալ կուզեմ, կը փափաքիմ վերջ տալ այս ապերախտ կեանքին. բաց թեւերդ մայր, բաց բաղուկնելդ որոց վրայ անցուցի խանձարուրի օրերս, բաց որպէս զի հոն նետուիմ ու հոն զանեմ երկնաւոր ու յաւիտենական հանգիստ . . .

Ֆաթմա որ ուշի ուշով մտիկ կընէր ֆէրհունտէի արցունքու բացադանչութիւնները, ընդմիջնեց.

Դուն խնդեցեր ես աղջիկ, դուն քու երջանիկ ապագադ կործանել կուզես կոր, դուն չես զիտեր կոր քու երջանկութեանդ ձամբան, մոլորել ես, ձիւնաւ

խառն մրրիկին իր մայրը կորսնցնող գառնուկին պէս, պարապ տեղը կը մայես կը կենաս կոր, ալ բաւ է, սրբէ արցունքդ, հանդարտէ և խորհէ անգամ մը, դու դեռ տղայ ես, քու տասնըլից տարիներդ դեռ բան մը չեն դրեր գլխուդ մէջ, չես կրնար կոր մտածել և որոշում մը առաջ. գերասանի պէս բերնիդ եկածը առանց չափելութող կուտաս կոր. եկուր աղջիկս եկուր, ալ բաւ է, եկուր, գիրկս եկուր և տեղի միտար չարագուշակ երազներու, որոնց մէջ կը տանջուի պէյը. անիկայ քեզմով պիտի ապրի, անիկայ քու սիրոյդ ծարաւի է, և յաղեցուր անոր պատակը, քու շրթներովլդ «քուկինդ եմ» ըսէ անոր և ահա աշխարհի էն երջանիկը դուն պիտի ըլլաս.

Ու դեռ պիտի շարունակէր խօսքը, երբ յանկարձ Ահմէտ բուռն շարժումով մը ֆէրհունտէի վրայ յարձակցաւ, բռնեց անոր թեւերէն եւ աչքերը՝ որոնց մէջն կատաղութիւն և մահ դուրս կուգախն, աղջկանը վրայ ձգեց պահ մը:

Էնվէր, որ քիչ հեռուն չամի ծառի մը վրայ ելած ձիչդ սենետուկին մէջ կը նայէր, տեսաւ թէ իր սիրուհին՝ ֆէրհունտէն հակառակորդին թեւերուն մէջ էր ալ . . .

Այսքանը բաւական էր իրեն համար: Վրէմը պէտք էր որ իր տեղը գանար:

Ֆէրհունտէ երբ տեսաւ որ իր տատօ Ահմէտը զինքը կը բանաբարէւ և կուզէ բռնի կերպով շահիւ իր սիրուը, սկսաւ պտռաւ.

— Օդնութիւն, օդնութիւն . . .

Մինչ Ահմէտ պէյ վայրագ գաղանի մը պէս կոռնար.

— Բայ' չար սիրա աղջիկ, ըսէ, կուզես որ մեռնիմ, մեռնիմ որպէսզի էնվէրը վայելէ քեզ, այո՞, ատանկ կուզես, ոչ երբէք, էնվէրը պիտի մառնի ու ես

քու աէրդ պիտի ըլլամ, իմս պիտի ըլլաս չար աղջիկ, բայց հիմայ հասկցայ թէ մինչեւ որ անոր մարմինը աշխարհս ու անունն ալ միտքէդ չանձետանան, ես չըպիտի կրնամ հասնի նպատակիս: Ուրեմն վազը, վազը պիտի իմանաս գոյժը, երկու օր պիտի լաս անոր համար, իսկ երրորդ օրը իմս պիտի ըլլաս, պիտի մունաս անցեալը և ապագան իմս պիտի ըլլայ. դուն դեռ յամոէ, քու այդ յամառութիւնդ անոր մահուան պատճառ ըլլալէ զատ ոչ մէկ բանի պիտի ծառայէ, դուն անոր դահիճը պիտի ըլլաս, և ես քու հրամանովդ անոր արիւնը պիտի մտնամ, մաղքը վիզդ: Եթէ այսօր համակերպիս և ընդունիս զիս և սէրս, փրկած պիտի ըլլաս ան զավալը աղան՝ որուն ժամերը համրուած են այս վայրկեանէս: Բսէ, խօսէ, քու մէկ խօսքդ կեանք մը պիտի փրկէ, քու մէկ այսոցդ ինվէրի հոգին պիտի աղատէ . . . : Վազը սեւ լուրը շուտով պիտի հասնի ականջիղ, անիկայ իր կեանքը վրայ պիտի տայ և դուն կրկին իմս պիտի ըլլաս, բայց հիմա երբ բերնովդ հաւանութիւն տաս և համոզուիս ինձ հետ կապուելու, այն ատեն երկուքդ ալ փրկուած պիտի ըլլաք: Գոնէ դուն որուն համար կը սիրեմ կըսես, ան մեղքցիր ինայէ անոր . . . :

Ֆէրհունտէ թօթուեց ու, ոտք ելաւ և Աստուածային ոյժ մը կարծես մղեց զինք հրելու դինով հսկան, որ բազմոցին վրայ տապալեցաւ գնդականար անասունի մը պէս . . .

— Երէ, ուզածդ ըրէ պէյ, դուն ինվէրէն աւելի ուժով ես, դուն անկէ ալ աւելի կարողութիւն անիս ուղածդ ընելու և զայն մեռցնելու. ինվէր կը մեռնի, հակառակը չեմ անդեր, անիկայ իր կեանքը փերջ կուտայ քու ձեռքովդ, բայց մի կարծեր թէ Ֆէրհունտէն քուկդ:

Կըլլայ կամ պիտի ըլլայ: Եթէ ինվէրը գերեղման պիտի զրկես, հողը անյագ է և ընդարձակ, քիչ օրէն զիս ալ կընդունի իր ծոցին մէջ: Ինվէր պիտի մեռնի ինծի զոհուած ըլլալու անիրաւութեամբ, ու ես պիտի մեռնիմ այդ անիրաւութիւնը փրկելու համար: Մ'ուշանար գը նայ, զա՛րկ անիկայ և դարձիր իմ դիակս գրկելու աւրիւնոտ ձեռքբռովդ . . . : Սէրը, ա՞ն, ճշմարիս սէրը թիթեռնիկին (քէրվանէ) պէս է, անիկայ կրակը կը սիրէ, բացերուն շուրջ կը դառնայ, մահը զինքը դէպի իրեն կը քաշէ ու հոն կ'աւանդէ իր հոգին. ահա մենք ալ այդ բերվանեներուն պէս մահը կը սիրենք, անոր շուրջ կը դառնանք, անոր կը մօտենանք մինչեւ որ նըպատակնուս հասնինք, քու ընելիքդ բարիք մը պիտի ըլլայ, որով զեեղ աւելի շուտ պիտի միացնես, եթէ ոչ հոս, այս կեղծ ու պատիր աշխարհի վրայ, գէթ հանու գերձեալին մէջ . . . :

Ֆաթմա որ ուշի ուշով կը դիտէր Ահմէտի չարժուձեւերը, սոսկաց:

Ահմէտ, ինքզինքմէն ելած էր ալ, անիկայ կատարեալ վագր մը կարձած էր հիմայ, աչքերէն կայծեր դուրս կուգային, ցից մաղերը կը միսային և կուրծքը փքոցի մը պէս կելեւէջեր:

— Պէտք պէտք ինայէ, խօսք առաւ Ֆօթմա, աղջիկս կարելի է մինչեւ վազը փոխէ իր միտքը, հիմա ահես որչափ յուզեալ է այս գիշեր, ես անիկայ կը համոզեմ, և վազը կրկին երբ այցելս իրեն՝ բոլորովին փօխուած պիտի գանես զինքը: Խօսք կուտամ կոր քեզդի, Ֆէրհունտէն քուկդ պիտի ըլլայ և պիտի մոռցնէ քեզդ քաշածներդ, ինվէրին ալ արիւնը մի մանար ու գործը լինձմէ դիտցիր . . .

— Ֆաթմա, կրկնեց Ահմէտ, զիս քնացնէ կուզես,

զիս համոզել, լուսղե՞լ կուղես, հէրիք որչափ քու խօսքուդ խարուեցայ, հէրիք որչափ թմբեցուցիր զիս եռ լաքաֆիներովդ, ալ բաւ է, ալ չեմ խարուիր, զիս ես գիտեմ ընկիրս, այս աղջկը ոճրադործ պիտի ընէ զիս, բայց մեղքը իր վիզը, էնվէրը պիտի զարնուի, բայց յանցաւորը առաջի Աստուծոյ Ֆէրհունտէն պիտի զը...»

Ահմէտ այս խօսքերը լսելէ վերջ մանթօն ուսերուն առաւ ու մեկնեցաւ ֆաթմայի առւնէն:

Ժայը գիշերուան չորսն էք:

Առջի իրիկուան մեղմ հովը փոթորիկի փոխուած էր հիմա, ու երկինքը սեփ սեւ, պլպուլ մը, ասաղ մ'անդ չէր շողար կամարին վրայ:

Ահմէտի մեկնելէն վերջ, ֆաթմա չուղելով կրկին յուղել աղջիկը, ձգեց որ ան իր ննջասահնեակը քաշուի, որ պարտէզին վրայ կը նայէր, ու ինք ալ կարգ մը խորհրդածութիւններ մոլտալով իր սենեակը ելաւ. դուները դոցուեցան և քստմելի լուսւթիւն մը եկաւ գը- րաւել քիչ մը առաջուան խլացուցիչ աղմուկը տանը

Դուրսը հովը կ'սունար, ծառերու ճռինը և տերեւնե- դիշերապահը իր բիրտ ճոկանով հիմա հինգը կը զարնէր:

Պէտք է խղճալ ու ցաւիլ անոր վրայ, որ կատար-  
եալ ու անկեղծ սէրէ մը չարչարուի:  
Էնկիր երը հեռուէն աչքովը տեսաւ Ֆէրհունտէին  
վիճակը, երբ աս վերջինը Ահմէտի բաղուկներուն մէջն եկաւ բոյն դնել իր սրտին մէջ,

Ժամանակ չի կորսնցուց, նաւամատոյց վաղեց, հոն պարուած մակոյիներէն մին քակելով բացուեցաւ դէպի ի ողի, որ այս ատեն դեռ չէր յուզուած և հովը սաս- պի չէր ալիքները գրգռելու համար:

Ուր կ'երթար, ի՞նչ էր նպատակը...  
Հէյպէլիի անսաշէն եղերքները քերելով մութին մէ- ին թիավարեց մինչեւ Յաւնաց Աստուածաբանական արժարանին ստորոտը, ուր ոչ թէ գիշերուան այդ ժա- ման, նոյն իսկ ցերեկին ոչ ոք կը գանուէր, բացի մէկ աբեղաներէ, որոնք հոտ կառանձնանան աշխար- հային խօսուըռոտուքներու համար:

Մակոյիկը կապեց և դուրս նետուեցաւ:  
Էնվէրի աչքերը արիւնարրու գաղանի մը պէս կը իայլատակէին մութին մէջ, կը դողար և վրէժիբնդիր արկութիւն մը վագրի փոխած էր գառնուկը:

Արագ արագ վագելով քան թէ քակելով, հասաւ նէրհունտէի տան պարտէզին կողմը, ուր սովորութիւն ունէր կենալ շաբաթը մէկ երկու գիշեր, տեսակցելու համար անոր հետ: Գիտնէն պլպտիկ քար մը առաւ, վեր՝ պատուհանին ապակիին նետեց: Երկու վայրկեան վերջ երբ կը պատրաստուէր երկրորդ անգամ ծանուցանել իր լալուստը, Ֆէրհունտէ ճերմակ շրջապեսուլ երեւաց իրէն...

— Էնվէր պէտք էք...

— Այո՛, շուտ հագուէ և խոհանոցին դռնէն եկուր վիս գտիր, մարդ չկայ, քիչ մը կրնանք պտտիլ, կարե- սոր ըսելիքներ ունիմ...

— Ա՛խ, իմ վափաքս ալ այդ է, ես ալ ըսելիք-

նէր ունիմ... բայց ֆաթման...  
— Ան հիմայ քնացած կըլլայ, շուտ, ատեն մի կոր- ունցուներ, ժամանակը ուշ է...

Ֆէրհունտէ տեղի տուաւ : Հինգ վայրկեան վերջ մութ դոյն չարշաֆը պլուած պարտէլին դռնէն դուրս ելաւ, և երկուքը մէկ դէպի չամերու անտառակին ճամբան բռնեցին :

— Կը սոսկամ կոր պէ՛յ, ըսաւ Ֆէրհունտէ տեսնեւով որ ինվէր՝ անխօս կերպով արսդ արագ ճամբան կը արունակէր՝ անհանդարու չնչառութիւնով մը :

— Քալէ՛, ըսաւ ինվէր, խօսք մը, բառ մը չեմ ուղեր որ ընես...

— Ախ ինսայէ՛ պէյս, այս իրիկուն սեւ սեւ խօրսութիւն միտքո կը պաշարեն կոր, ուր կը տանիս զիս, կ'երթանք կոր...

— Լու՛ չուն, գոռաց պէյը, կարծեմ թէ Ահմէտի ժամուն եկայ այդ հանգիստը էիր, ու ես գիշերուան այս

— Դժո՞ջք, ես Ահմէտի բաղուկներուն մէջ, ե՞ս,

ախ զրպարտութիւն, անէ՛ջք անոր որ քեղի այդպէսէ հաւացուցեր, նստինք պահ մը պէյ, նստինք ու իմ արցունքներս պիտի համոզեն թէ՝ անիկայ իր վայրագ նկատակին չի կրցաւ հասնելու ու չպիտի կրնայ ալ հաստիս մէջ որ քուկդէ միափառ քու սէրդ պահեմ սըրս

— Սատանայ, գոյեց ինվէր բղքակու աստիճան աչքերս միայն, աչքերս, անոնց միայն կը հաւատամ, անոնք վկայ են ըսածիս...

— Անայէ՛, ախ առ տեսակ խօսքերով արիւնը մի կը պաղատի իր անմեղութեանը վրայ պիտի համոզես, կուզէ աւանդել քու բաղուկներուդ մէջ պէ՛յս ...:

մտնար անմեղի մը, որ ստքերուդ կ'ինայ, կ'աղերսէ, կը պաղատի իր անմեղութեանը վրայ վասահ, հոգին Սուտէ, Ահմէտ ինձի դպած չունի, ես խօսառ մեր

ժած եմ զինքը, և գիտցիր որ այդ ընելուս համար ինձ մահ կսպառնայ, եթէ դուն այսօր զիս չփրկես, վաշը դոցէ գաս գերեզմանիս վրայ աղօթելու... .

— Սատանակ, դեռ կը յանդգնիս համոզել աչքերս, որոնք կը վկային ճշմարտութեան, քալէ՛, պզտիլ մէկ չարժումդ կեանքիդ վերջակէտը պիտի ըլլայ... .

\* \* \*

Հիմա Մարմարան կարծես սովորալուկ շան մը պէս կոռնար գիշերուան այդ պահուն: Դիակներու ծարաւի ծովը կարծես բարկութենէն քրիուրներ դուրս կուտար, որոնք մութին մէջ մուելաթաղի պատրանքը կուտային իրենց ճերմակ պղպջակները խառնելով սեւ ջուրերուն: Հեռուս կղզիներու ջանուցիր լոյսերը, մութ երկ-

անկամարին վրայի աստղերուն պատրանքը կուտային, որոնք մերթ կը մարէին, մերթ կը վառէին յաշորդաբար:

— Եննաւ օդ մը հովոս ու մըրկայոյզ, տեղատառարափ անձրեւ մը կոպառնար, և արդէն ցասկոս ծովը յալթելու համար յորդառատ անձրեւէ ուրիշ բանի չը սպասուէք:

Հէլակէլիի կռնակի կողմը, ճիշդ Աստուածաբանաւ կան վարժաբանին վրայօքը, ծովեղբին մօտ պղտիկ մաս կոյկը որ վւղի մը պէս կը խալար աւագներու վրայ փշրուող ալիքներէն, կազմ ու պատրաստ կը կենար:

Գիշերուան ժամը եօթն էք:

— Ալլահ աչկընա ինվէր, կ'աղաղակէր թէրհունտէ, մահը աչքերովը տեսնող դատապարտեալի մը պէս: Ալլահ աշկընա, ինայէ:

— Մտիր Յա՛ծ բոզ, մտիր դագաղիդ մէջ, հողը չի կրնար պարտկել մեղքդ, ծովին ջուրը աղտառութիւն չի բռներ, մտի՛ր ապա թէ ոչ պիտի սատկեցնեմ...

Ֆէրհունտէ ի զուր կաղոչէր համողելու թէ ինք  
անմեղ էն, և թէ սիրաը մաքուր, Ահմէտը մերժած  
էր և միմիայն իր պէյն էր իտէալը:

— Մափ' ը, կը դուռը ճրէշը, վրէժը պէտք է իր  
գերը կատարէք...

Թեւի ուժով բռնունցք մը ակնթարդի մէջ մակոյ  
կը նետեց Ֆէրհունտէն, էնվէր քակեց չուանը և ծունդի  
գալով մակոյկին մէջ ըստւ:

— Ալլահը, ա՞ֆ էթ...

Մակոյկը բաւական բացուեցաւ ծովուն վրայ. առ  
լիքները կարծես ուղելով մասնակցիլ վրէժին, ալ աւելի  
սաստիցած, ալ աւելի փրփրոտ կապառնային ժամ առ  
սաջ կուլ տալ իրենց գիշերային որսը:

Էնվէր ոսքի ելլելով սա վերջին խօսքերը արտա-  
սանեց հեծկլաւալով.

— Ֆէրհունտէն իմա էր, զուն Ահմէտ զայն յափըշ-  
տակել ուզեցիր, երկրուոր կեանքը ինչ կարժէ մեղ,  
մահկանացուներուս համար, ահա Մարմարան իր ան-  
թած ջուրերուն հարցուր քու Ֆէրհունտէդ, ոչ դուն եւ  
դին, ես յաղթանակը տարի, որովհետեւ անմահութեան  
մէջ անիկայ իմա է...:

Այս ըսելուն վրայ, առիւծի մը պէս նետուեցաւ  
Ֆէրհունտէն վրայ, զրկեց զայն մէջքէն և մակոյկին կո-  
պին կրթնելով, երկուքը մէկ ինկան անդունդը, սիրոյ

և ոչոր ալիք մը իր փրփուրներուն մէջ կուլ տուաւ  
արկու մարմինները և մութը իր քսամնելի ծոցին մէջ  
պահեց երկու հաւատարիւ որտերը:

Ճշմարիտ սիրը ինչ ոճիրներ կը գործէ...

Վ Տ Փ Ի Փ Ե Բ Ա Ն Բ Ն Ե Բ

— Ի՞նչ կարժէ ոսկեներու կոյտ մը ագեղ կնոջ մը  
հետ, քանի որ դրայը կ'անյետանայ իսկ կինը կը կենայ:  
— Կիները և խենդերը բնաւ չեն ներեր:

— Կին մը և վառարան մը պէտք չէ ձմեռը դուրս  
հանել դռնէն:

— Կինը կը խնդայ երբ կարենայ, իսկ կուլայ երբ  
ուղէ լաւ:

— Աղքատութիւնը և սէրը շատ դժուար է ծած-  
կել.

— Կնոջ սուտը լեզուն է, որով թէ կապառնայ և  
թէ կը պաշտպանէ ինքոյնքը:

— Կին մը որչափ իր ամուսինը սիրէ այնքան կը  
հեռացնէ անիկայ իր ունակութիւններէն, բայց ընդհա-  
սուակը, ամուսինը որչափ իր կինը սիրէ, այնքան նոր  
քարրիսներ ծնցնել կուտայ անոր մէջ.

— Ըստանիքին մէջ ծնած ու մեռած բարերարնե-  
րու և մեծ մարդոց անուններովը պարծենալը կը նըմա-  
սի ծառի մը արմատներուն մէջ փնտուել այն աղնիւ և  
համեղ պտուղները՝ զորո ճիւղերուն վրայ պէտք էր  
դանալ:

\* \* \*

Մեծատուն մը ըստւ սպասաւորին:

— Ծօ կիրակոս, գնայ նայէ վերջին թռէնը քանիին  
պիտի մեկնի...

Սպասաւորը երկու ժամէն կը համի ու երբ տէրը  
կը հարցնէ թէ ուր մնացիր, սպասաւորը կը սպասաւ-  
խանէ:

— Ներեցէք տէր իմ, ձեր բարկացոտ ըլլալը գիտ-  
նալով, ուրիշին խօսքին չվատահեցայ և սպասեցի մին-  
չեւ որ վերջին թռէնը մեկնեցաւ և ազա եկայ ըսել  
թէ...

Lms.	Or.	ՅԵՐԵՒՆԻ ԷՎԱԼ	ՀՈԿՏԵՄՐԵՐ	ՏԵՎԱԼ	
		ՕՐ 31	ՕՐ 30		
14	1	ՅԵՐԵՐՈՅ իշխանացն Սահմակայ և Համազառություն : 32. Անանիսայ առաքելոցն: ՏՃ. Արքիքէ:			Համակակ օդ
		Փ ծն. Լս. ժամ 46 , ըովէ 30 Խառնակ օդ			
15	2	ՈԽԹ. Պահք: ՏՃ. Շեղվար (օր 30) . և Շեղեր պայ- ռամբ, աւուրս երիս :			Հ 175
16	3	ՅԵՐԵՐՈՅ Կօթանառուն և երկու աշտակերտացն Քրիս- տոսի: Հը. Խեռուան (օր 29) :			Հ 172
17	4	ԿԱԲԹ. Դ. զկնի Խաչի: Երկրորդ կիւրակէ Եօթն շա- բաթուց :			Հ 172
18	5	ՅԵՐԵՐՈՅ Փոկասու հայրապետին , և երանոսի հե- տեւողին առաքելոց: ՀԱՐՍԱՆԻՔ: Տոմ. Սահմի (օր 30): Լմ. Գուկասու աւետարանչին :			Հ 172
19	6	ՊԵՏ. Սրբոց Կուսանացն Թեկլեսայ, Վարդառայ և Պե- ղագեայ: Ծն. Թովմանի առաքելոց :			Հ 171
20	7	ՊԵՏ. Պահք:			Դ 171
21	8	ՅԵՐԵՐՈՅ Պանդալէսնի բժշկին , Երմողեսյ Քահա- նային, և Եւպրաբակոյ կուսին:			Դ 172
22	9	ՈԽԹ. Պահք: Ծն. Յակոբայ Տետանեղօրօր :			Ա 172
		Պ Առ. Քռ. ժամ 15 , ըովէ 37 Հողմային եղանակ			
23	10	ՅԵՐԵՐՈՅ Թարգմանչաց վարդապետացն մերոց Մես- րոպայ, Եղիշէտ, Մովսէսի քերթողին, Դաւթի անյաղթ- փիլսասփային , Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն: Յայսմ. Սահմի (օր 30) :			Ա 172
24	11	ԿԱԲԹ. Ե. զկնի Խաչի: Երբորդ կիւրակէ Եօթն շա- բաթուց: Լմ. Ռափայէլի Հքեշտակապետացն:			Ա 172
		Ը Կարիճն ժամ 9, ըովէ 58 ՏՃ. Գուրմի Արքէպ			
25	12	ՅԵՐԵՐՈՅ Գրիգորիսի Ազուանից Կաթողիկոսին , և Ա 172 Սրբոց Հարցն Թաթթույ, Վարսոնի, Թովմասու, Անտո- նի և Կրօնիկուսոյ , և Եօթն Խոստանութակացն՝ որք Ժինանինեան վանոն Կատարեցան: ՀԱՐՍԱՆԻՔ :			
26	13	ՅԵՐԵՐՈՅ Առաքելոցն Անանիսայ, Մատաթիայ, Բառ- նոսի : Փիլիպոսի, Յովհաննես, Եղիշակայ և Սիղուա-			Ա 172
27	14	ՊԵՏ. Պահք:			Ա 172

# ՏԻԵԶԵՐՔ

ՈՒ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԻ

Ի. ԹԵՇԵՆ ՀԱՏՈՒԱԾ ՄԲ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Երբ ընդհանուր աշխարհակալութիւնն ու մեծ պետութեան հաստումն առերեցէն ջնջեցին՝ երկիրի վրայ և հոռմէական կայսրութեան մէջ՝ ընտանեկան կենցաղն ու բնավայրը, բարքերն և ազատութիւնը, մարդ՝ փակուած կաշկանդուած անդարձանելի անկումի մը մէջ և անել բռնակալութեան մը ներքեւ՝ թողուց ասէն յոյ երկրաւոր և դարձուց իր ձիգն ալլուր: Մատածութիւնը միայն գեռ ազատ կը կենար, և կրօնքներու խառնուրդը, Արեւելքի բացումը, ցեղերու հաղորդակցութիւնը՝ փիլիսոփայութեանց փոխանակութիւնը՝ կը հասնէին մը նուցանել զայն և ընդարձակել: Այսպէս ընդարձակուելով՝ մտածութիւնն հասաւ ժամանեց տիեզերականին ու ինչդեց երկնային աշխարհէն գերադոյն բարին, զոր կը զանար իրեն երկրաւորը: Մարդն՝ որ երբեմն հայրու քաղաքացի էր՝ եղաւ կրօնաւոր ու փիլիսոփայ, և միբթարուեցաւ իր թշուառութեանց վրայ անհունին վերհայեցումով. բայց անձնիւր ոք ժամանեց հոն իր շաւի զովք: Մինչեւ ժողովուրդը, ինքզինքը առած տեսչանց և աւանդութեանց, առասպելներու և մտային յափշտակութեանց մէջ կը փնտուէր գերբնական աշխարհ գիտութեամբ և յունական իմաստութեամբ՝ ձեռք կը բերէին՝ բնական աշխարհի և մարդկային զօրութեան և քաջութեան, և Յազիկք՝ յետ դաշինքի՝ յանձ-

— 147 —

լացումին մէջ՝ բուժումն իրենց ախրութեանց և ներկն իրենց առաքինութեան: Այս իմաստասէրներէն ին դիպուածով մը թագաւոր եղաւ, և ցոյց տուածած վատթարած մարդոց, որ յուռահատ կամ մոլեսանդ էին, թէ որպիսի՝ կըլլայ ստոյկեանի մը հոգին: Թագաւորը ըլլալ, ինչ տիսուր աստիճան այսպիսի սիմար: Վասն զի՝ իրարու հաւասար մարդիկ՝ տիթ կըրնան պահել անձնուրացութեան և համարձակուան քանի մը նշխարներ, անմոք պէտք չունին հաշուելու ոչ ալ շողոքորթելու, անօնց բարեկամութիւնը ըջնայ ըլլալ ձշմարիտ, զոր չեն կըրնար ասպականել ո՛չ սրկուզն ո՛չ փառասիրութիւնը վերահաս: Բայց թագաւորի մը, որ օրէնքով հասած է բացարձակ իշխանութեան, շողոքորթներէ ու վարձկաններէ զատ ի՞նչ ընդառաջ կելնէին: Եւ ատոնցմէ ի՞նչ կընծայուէր իրեն՝ եթէ ստութիւններ ու վատութիւններ: Այսպիսիներ ու ցացաւ Մարկոս-Եւրելիոս ալ, և ունեցաւ՝ առա՛տ առա՛տ՝ իր շուրջն իր քովը մինչեւ իր ընտանիքն մէջ: Ինք կառավարել կը կոչուէր աշխարհ մը՝ որ իյնալու քայ էր.՝ կը վերադառնար երկար ուղեւորութիւնէ մը, ապառած՝ ազատելէ ետքը պետութիւնը բարբարոս աղջերէն ու ապստամբութիւնէ, և կուտար իր ութամեայ ապակայութեան համարը. տեսաւ հոն ժողովուրդ մը՝ որ չնորհապարտ ձեւով մը նշանացի կը պահանջէր իր պէս ութ ոսկի սկոտի գոնդիարին մը: Հիւանդ համայ եւաւ Մարկոսաններու դէմ, և չգանելով պատուած զինուոր՝ վաճառեց իր պալատին բոլոր գանձերը՝ ի պէտս ծախուց պատերազմի, մինչ խօլ ամրոխը կը սիրպէր իրեն որ իր հետ տանի մոգերու և քաղդէացին ըութիր մը: Յորդորեց զինուորներն հաւասարմութեան և քաջութեան, և Յազիկք՝ յետ դաշինքի՝ յանձ-

նեցին իրեն հարիւր հազար դասալիք . իր լոււագոյն զօռավարն Աւտիփոս կասիոս մատնեց զինքը . իր մարտընկերը Վերոս՝ թաթխուած թմրած էր անառակութեանց մէջ . իր տղաքը մեռան , իր կինը վատահամբաւուած կամ վատագործած էր , իր որդին և ժառանգորդը , Կոմոդ , պիտի ըլլար մարդասպան մը հրէշ մը : Ինչ իր շուրջը կը նկատէր ու կը տեսնէր մարդոց նուաստանալը , ամուսնութեանց նուազումը , բնակլութեան պակսիլը , գետիններու խոպանանալը , նանրապաշտութեանց ճարակիլը , արութեանց անհետացումը , հասարակաց բարւոյն սիրոյն խափանումը , ու չէր կը բնակը՝ իրքեւ մասնաւոր անհատ մը՝ ունենալ այս չարիքը մոռնալու կամ անտեսելու իրաւունքն և կամ անոր մէկ մասնիկը միայն կրելու միխթարանքը . վասն զի թագաւոր էր , ու իր աստիճանով ստիպուած էր տեսնել զայն բովանդակութեամբ և անդադար , նկատել անոնց անվրէպ հետեւանքն աղէտալի . զուր ջանալ դարմանել զայն , գիտակցիլ իր անկարողութեան , և մարտընել միշտ՝ յաղթուելու համար մի՛շտ . « Եթէ սիրոսիդ ցաւէն մեռնիս անդամ՝ ըրածնուն պակաս բան մը չպիտի ընեն » , կը սուէր իրեն : Եւ այլուր՝ « Տկարամիտ արաբածներ են այն քաղաքէտաները , որ փիլիսոփայութիւն կը գործածեն . տղայ միտքեր » : Պղատոնի հասարակապետութենէն բան մի՛յուսը . քիչ մը բարիք , որշափ ալ քիչ ըլլայ , բա՛ւ համարէ զայն քերդի » : Այս քիչ մը բարիքն էր վեր բռնել պիտութիւնը , որ ջլատած էր աղէտներով ու մոլութիւններով , որ խորասուզուած էր երկրաշարժներով , աւերած՝ ողողումներով , սպառած՝ մահերով և պաշարուած՝ բարբարոսներէ : Չունենալով ո՛չ առողջութիւն ոչ զինուոր՝ կը ձմերէր Գերմանիայի մէջ՝ գերիներու վարձկաններու նորաժողով սուսերամարտիկներու

հետ , ճահիճներու և ձիւներու մէջ , անցնելով գետերու սառոյցներէն , հաւածուած նենգաւոր յաղթեալներու ապստամբութիւններէն , կրկնեալ ու բազմակրկնեալ ասպատակողներու յամառութենէն , ապականնեալ զեղծեալ բանակի մը ագաւութենէն , անլոելի ի Հռոմ , իր սիրտին և սկզբանց հակառակ ստիպուած սպաննել ու աւերել , տիրացած իր յաղթութեանց վրայ « Սարդ մը կը փառաւորուի ճանճ մը բռնած րլալուն վրայ , ուրիշ մը նապաստակ մը , ուրիշ մը՝ կինծեր , միւս մըն ալ՝ արջեր , այլք՝ Սարմատներ » : Ո՛չ փառքի սէրր , ո՛չ յաջողելուն հածոյքը , ո՛չ փրկութեան յոյսը , ո՛չ պայքարին թափր , ո՛չ ալ գործելու ախորժակը , ասոնք չէին զինքը բռնողները , բայց մհայն խղճմատնքը . անյոյս նաւուղիղի մը նման կը վարէր իր նաւը՝ գիտնայով նաև որ պիտի ընկղմէր ան : Այն ժամանակներն իրեւ մարդապիկը դժուարին էր արդէն , իսկ իրը ինքնակալ ապրիլ՝ ո՛հ կարի՛ ևս գժուարին : Ու վերջապէս մեռաւ Գերմանիայի մէջ իր պաշտօնին գլուխը , վրանի տակ՝ 58 տարեկան՝ աննուազելի կորովի մը մէջ : Պահեց պետութիւնը դաւածանութեանց և բարբարուներու գէմ՝ հակառակ քաղաքացիներուն և թշնամեսց , հակառակ ժողովուրդին անդպայութեան , իր բնկերին մոլութեանց , իր զինուորներուն վատութեան : Հրաժարեցաւ հածոյքներէ , պերճանքէ , չտփաւորեց իր իշխանութիւնը , գիւմագրեց խուժանին , յարգեց ծերակոյտը ու միշտ գործեց ըստ իրաւանց և արդարութեան : Աւելի մարդասիրական ըրաւ օրէնքը , պաշտպանեց ամբաստաննելը , տղան ու գերին զրպարտուեցաւ և հակառակուեցաւ : Վաճառեց իր պալատի կան կարասիքն և գիւղ քաշուեցաւ , ի դարձին՝ գաւառներու տուրքը 46 տարի յետաձգեց : Իր պարզագագեստութեան հակառակ փիլիսոփանիւ-

բուն համար հաստատեց դպրոցներ, և թողութիւն շենորհեց ապստամբողներուն, որ կուզէին բառնալ իր և իրեններուն կեանքը: « Կըսէք ինծի որ մէջաւերէն վերցունեմ զինքն յապահօվութիւն իմ որդւոց: Թո՛ղ մեռնին որդիքս եթէ Աւիտիս անոնցմէ աւելի սիրուելու արժանի է, եթէ պետութեան օգուտը՝ կը պահանջէ որ կասիս ապրի մանաւանդ քան Մարկոս-Աւրելիոսի որդիքը»: Եւ կասիս պատահմամբ սպաննուելով՝ խնդրեց ձերակոյտէն որ խնայէ դաւաճանները « Թո՛ղ չպատժուի ոչ մէկ ձերակուտական... թո՛ղ պատգամաւորք գան... թո՛ղ ետ արուին յարքունիս գրաւեալ ինչք... թո՛ղ հարստանան անոնք ազատ երկիւղէ և ուզած վայրեր՝ նին թո՛ղ երթան: Հա՛րք համագրեալք, դժուարին ողորմածութիւն մը չէ ներեւ որդւոցն և կանանցն անոնց, որ մեռած են, ուր էր թէ կարենայի անոնցմէ մէկ քաշնին ի կեանս դարձունել իրենց գերեզմանէն»: Մարկոս Աւրելիոսի ողորմածութիւնը, բարութիւնը, գորովանքը կը բդիէին առուինման, և կը բդիէին ուղղակի ամի՞ւն սիրաէն, ստոյիկեան դժնեայ վարդապետութիւնն ո՛ւ երբէք չէր նուազեցունէր իր մարդասիրութիւնն և քաղցրութիւնը: Կը սիրէր սիրելը, իր մասծորքեանց յառաջաբանն երախտագիտական գեղում մըն է: մանրակրկիտու սրտաշարժ խնամքով մը կը թուարէի հոն իր ծնողմէն ու վարժապետներէն առած բարիքը: մինչև վերջը մասարեալը, մեծարողը: Փիլիսոփայութեան ու քաղաքականութեան բարձունքէն՝ կիշնար ընտանեկան ծոցը շաղիր իր աղջիկներուն մանրիկ հոգերուն՝ բոլորովին զբաղած իր սիրունիկ սոխակիներուն գորովին ու թոթով վանքին»— « Ահա հասան, կը գրէ, ամարային տաքերը՝

այց մեր փոքրիկներն ո՛րչափ առողջ են, կարծես գարան եղանակին մէջ կը վայելենք մաքուր օդերը»— այսմ՝ ինք ունի վիրդիկիսոի սիրան ու մեծութիւն-իր մասծութեանց մէջ չիկայ ուռաւցիկ կամ չորսմաք ոչ մէկ բան. հոն ստոյիկեան տրամաբանութեան ոլոր դժնիկներն աներեւոյթ եղած են. հոն չես զգար սամայող ու դաժան եղանակ մը. իր տուաքինութեան մշտակալ կամ նորանշան բան մը չես գտներ. մշտաձգեալ կամ նորանշան բան մը չես գտներ. ոլգաս անոր աղբիւրը: կամթեղին լոյսով իրիկունները բուած այս վճիռները, որն ի Գուատա լանակին մէջ, որ ձերակոյտէն ելնելու ասեն, ամէնն ալ արտադրած մէծ գործ մը կում վասմ դրուցուածք մը. անոնք կը որին իրենց ծագումին և արդիւնքին դլումը. կը անուն անոնց ծնանիլն ու ներգործելը: Անոնք՝ Բասկալի ործերուն նմտն օրագրութիւն մըն են, բայց առողջ ութիւն օրագրութիւն մը: Երկա՛ր երկա՛ր խմած է հոն՝ թէ յափշտակութիւնն յուսահասութիւնն այլ գիւղնութիւնն և խալազութիւնը: Հակիրճ, սաստիկ, ծշգրիտ, պայծառ, անոնք՝ զապաւած եռանդի թագուկ աղաղակուներն են, և կը ցաւցընեն հոգին մէծ անաստեղծի մը որ՝ աչքը վասեմին սեւ եռած՝ տէրն է նուն իրեն, և՝ հիացումով խռոված՝ հազիւ կարաքերէ անի մը բեկրել խօսքեր դաշնով. « Այս մէծ քաշին քաղաքացի ապրեցար, ո՛վ մարդ, երեք կամ իսկ տարի՝ այդ կարեւորութիւն չտնի. կարեւորն երանութիւնը բաղու-լ քաղաքացի՝ գերեվարեալ ոչ թէ բանաւորէ մը կամ անիրաւ դատաւորէ մը այլ բանութիւնէն որ մուտք կը կեղի հոն, ինչպէս գերակասար մը զոր կարագարը կարձակէ ու կը յաջորդէ: Հինգ արարուած-ւորը չըսի, այլ միայն երեք արարուածները: — Եւ աղէկ բայց կեանքը մէջ՝ այս երեքն ամբողջ խալազորիւ-

թիւնն են : Գնա՛ ուրիմն լնդոյր հոգիով մը , վասն զի քեղ արձակողն բառուր է :

f.

Ի՞նչ է ուրեմն այն հղոր մտածումն՝ որ կազմած է  
բովանդակ այս առաքինութիւնն և հաստատ բռնած է  
բովանդակ այս վարքը։ Միակ գաղափար մըն է ան-  
գաղափարը բնութեան։ — Մարկոս-Աւրելիոսի աչքին՝ աշ-  
խարհս չէ բնաւ շեղջ մը արարածներու այլ մի միակ  
էակ մը։ Չիկա՞յ բնաւ դէպք մը, որ չձգէ իր հաեւէն  
ու իր առջեւէն այն անհուն և անդուծնելի շղթան, որ  
կերկարի ժամանակաց մինչեւ երկու սպառուածները՝  
Զի՞կայ բնաւ ապրը մը՝ որ կցորդուած չըլլայ մեծ տու-  
րածութեան առանձնածայրերուն համազ անհուն և ան-  
եղծական պարունակին։ Ամէն էակ և ամէն փոփոխու-  
թիւն իրարու կը վերադրին, և անհուր է որ թիւ մը  
խզի ու մեծ ցանցը չաղդուի անկէ։ Այսպէս՝ բովանդակ  
տիեզերք կենդանի անհատ մըն է ինքնակաց ինքնափու-  
թիթ, որ կարտացայտէ՝ իր յառաջադայեալ ու տեսա-  
նելի ձեւերով։ յառաջագայող և անտեսանելի օրէնքը՝  
որով հաստեալ կը կենայ։ Միջոցին ապրածութենէն  
կեանքին, կեանքին զգայութեան, զգայութենէն մաս-  
ծումին՝ արամագրուած է կարտղութեանը դասակարգ  
մը, որուն առաջինը ձայն կուտայ երկրորդին ու երի-  
րորդը կը հարկադրէ առաջինը՝ զօգուած իրարու նոշ-  
պէս առաջինի մը ձապկը պառողը և կուտը, պէս պէս  
վիճակներ, որ կը յայտնին մի և նոյն զօրութիւնը, իրա-  
րու եաեւէ եկած խօսքեր, որ կարտացանեն մի և նոյն  
գաղափարը։ Մի միակ կենդանի մըն է ան որուն զոր-  
ծերն են դէպքերը, որուն անդամներն են էակները,

«Մի միակ գոյացութիւն մըն է ան հազարաւոր անջատ  
մարդիններու բաժնուած, մի միակ հոգի մը պարագըծ-  
ուած հազարաւոր բնութեանց։ Արուեստական շունչ և  
ոգի մըն է, իմացական հուր մը՝ որ ձեւամուտ կըլլայ  
ամէն բանի մէջ, որ կը նոյնանայ ամէն բանի, որ կա-  
նոնաւոր ընթացքով մը կը ծնուցանէ ամէն բան» ասու-  
ուած մը նախատես ու կարգաւորիչ, աեւակ մը «բուն  
սերմնաւկան» և ներգործական, որ բունած է նիւթին  
մէջ և կը կենդանագործէ զայն յարաժիր։ Առաջին  
ստոյիկեաններու միջոցով տառօրէն առնուած բոլոր  
այս աեսպինները՝ Մարկոս-Աւրելիոսի համար աեսպինե՛ր են  
միայն։ Նա կառաջադրէ միայն թէ աշխարհս միակ մըն  
է, ու օրէնքի կարգ մը կը կառավարէ զայն։ և այդ  
կարգն ունի բանականութեան մը ներդաշնակութիւնը(1)։  
Եւ ասոր վրայ՝ որպիսի տեսարան, տիրութիւնն և զբա-  
ռանքը միայն միտքի միալ տեսութիւններ էին, միտ-  
քի։ որ կանխազբաղած է մանրամասնութիւններով և  
անտես բրած է նկատել բալանդակը։ Ամէն ինչ բարի է,  
ամէն ինչ գեղեցիկ է։ Ո՞վ կըրնայ սանանել այն սակեղ-  
ծող և միակ բնութեան, որմէ դուրս բան մը չիկայ։  
Ո՞վ կըրնայ դիմադրել իր ձգանց, որոնցմէ դուրս չի-  
կայ ուրիշ ձիգ։ Ո՞ր գեղեցկութիւն չնուազիր այն  
խաղաղական ու անսպաս զօրութեան հանդէպ, ո-  
րուն կյանեալ ճգունք անդադար ի լոյս կը բերին ա-  
րարածոց յաւերժական ալիքն և որ միտուիս կը պար-  
զուի այդ ալեաց բիմամբն ու բաղիսմամբ։ Ո՞վ ինք-  
զինքը թափանցուած չըդգար հիացումով և ուրախու-

(1) «Հիւլէ կամ նախախնամոթիւն, նախականութիւնը կամ պատրաստված էլեկտրական մասն եռ քառաթիւնէն կառավագական էլեկտրական մասն եռ քառաթիւնը կամ պատրաստված էլեկտրական մասն եռ քառաթիւնը»:

թեամբ ի տես այն զանխուլ այլ կենդանի կամքին՝ որ հաստատուն կը բռնէ ու կայլակերպէ էակները, որ կը յաղթանակէ զայնո նորոգելուն և յաւերժացունելուն ատեն և որուն բոլոր ընթացքը տիեզերական բանին արդիւնքն է։ Ի՞նչ պէտք են ինծի այն կտրատ մտածութիւնները բիւրաւոր, որոցմով միտքս կըզբաղի զիս շըրջապատող հաստուածներուն։ մի միակ մտածում մը ամբողջական ու ձշարիտ է, բնութեան մտածումը, և միւնքն այնչափ արժէք ունին որչափ կցորդ են անոր։ Ուրեմն պէտք է որ մի միակ մտածում մը ունենամ ինչպէս մի միակ մեծ էակ մը կայ, և հարկ է ինծի անոր կապել մնացածը։ պէտք է ինծի դուրս ելնել իմ անձիս անձուկ շրջափակէն ու նկատել տիեզերական աստուածը, որուն մէկ անդամն եմ, ու պէտք է գործեմ և ապրիմ ըստ արդ ըմբռնումին։ իմ անձս չէ զոր կը սիրէ նա, այլ բովանդակը, ուրեմն պէտք է որ ես ալ սիրեմ բովանդակը և ոչ թէ զիս, իմ անձս։ ինք ոչ թէ սաեւծեց մի միակ մարդն առանձինն, այլ մարդոց հասարակութիւն մը, որ իրարու կցորդուած են ընկերական բընալդներով և միւնյն բանականութեան սուացումով։ Ուրեմն առանձինն իմ էութիւնս չէ՝ որուն պարտիմ սպասարկել, այլ մարդոց ընկերութիւնը՝ ոչ որպէսզի գովեն զիս կամ սիրեն զիս կամ զնահատելով իրենց կարծիքն և կոմ ակնխալութեամբ վարձուց, այլ վամնզի սաեւծուած եմք իրարու օգնելու համար « ձեռաց, ոտքի և արտեւանունքի նման » և վամն զի իմացականութիւնն ինք իրմէն իսկ կառնէ բնութեան հակումն ինչպէս ջաւըը կը հետեւի գետինին զառ ի վազրին։ « Ի՞նչ որ օգտակար է մեղուաց պարին, օգտակար է նաև մեղուին։ Դուն քեզի հաճոյք և զիւր մը ըրէ ընկերասիրական գործի մը անց-

նիլը՝ խոկալով Աստուծոյ վրայ։ — Այս համակերպութեամբ՝ բնութեան նմանութիւնն առերող բանականութիւնը՝ կը մասնակցի բնութեան վեհափառութեան։ Բանականութիւնը ներդոյ աստուած մըն է՝ մասն տիեզերական մեծ Աստուծոյն» անոր պէս օդոստափառ՝ լոյս մը նուրիբական՝ զինքը պահող մեեղէն ամանին մէջ կիւսովին պարածածկեալ, որ միայն ինքն է արժանին փափագելու և պաշտուելու « Եթէ մարդկային կենցաղին մէջ դտար արդարութենէ, ձշմարտութենէ, բարեխառնութենէ, արիութենէ լաւագոյն բան մը՝ բոլոր հօգւովդդարձիր անոր և վայելէ զայն, ըստ որում գերագոյնն է ան։ Բայց երբ չգտար լաւագոյն բան մը քու ներսդդանուած աստուծմէն աւելի, որ յարմարադրուած է քու կրիցդ հետ, որ կը սրբագրէ քու մտացդ ցնորքը, որ զգայական ազդեցութիւններէն գերծած է, որ կը հպատակի սրբոց և որ կը ինսամարկէ մարդոց անկէ զատ՝ միւս ամէն բան եթէ երեւցաւ քեզի համեմատաբար փոքր և նկուն՝ ուրիշ ոչ մէկ բանի պէտք չէ քեզի տեղի տալ քու հոգիիդ մէջ»։ Մի՛ միակ կատարեալ էակ կայ, որ է բնութիւնը։ մի՛ միակ կատարեալ դաղափար կայ, որ է բնութեան գաղափարը։ մի՛ միակ կատարեալ կեանք կայ, այն կեանքն ուր բնութեան կամքը մեր կամքը կը դառնայ կրլայ։

Մի՛ միակ կատարեալ միսիթարսութիւն կայ, զոր դարձեալ բնութիւնը կուտայ։ « Ա. սրբի սրբոց հետ համաձայն, և այն մարդը կապրի համաձայն սրբոց հետ, որ կընծայէ անոնց՝ անոնց վճիւններէն գոն հոգի մը. » Իմ գիշտա և ուրախութիւնս մտմալու արժանի բաներ չեն։ ամէն բան ընկզմած է անհուն բնութեան գաղափարին ներքեւ։ նա՛ միայն գոյ ըլլալու իրաւունքն ունի, ու դայն արտայացելու կատարելու համար միայն կը

կենամ աշխարհի վրայ . գլուխղրել անոր , արտսչել՝ տղայական յիմարութիւն է . անոր ճգանց համակերպելուս համար միայն բանաւոր մարդ մըն եւ . «Աշխարհ կը ձգտի ու կը փափագի պատահածին . պէտք է ուրիմ ըսել աշխարհի – քեզի նման կը ձգտիմ ու կը փափագիմ» – «Այսուկէս ըլլալով իրերու կարգն՝ իրենց իսկ բնութեան բերումով՝ պէտք էր անպատճառ որ այսպէս ըլլար . հակառակն ուղել՝ ուղել է որ թղենին թուզ չի- տայ .» – Ա՛ չեմ կը բնար ինձի պատահած չարին դէմ կքրիլ երբ ա՛ կը տեսնեմ որ՝ բովանդակ տիեզերքին համակարգութեամբ՝ այդ չարն ի յաւիտենից իմ ճակա- համար՝ պէտք էր վեր ի վայր ընել տիեզերական օրէնքն քին համար վշտահարիլ՝ երբ նշմարեմ ու խելամուտ ըլ- րսոտ այսու օժանդակող մըն եր աշխարհի լաւութեան : բիք մը չէ , վասնզի հարկաւոր է . ան՝ չտ- լայ կամ պատահել կերեւի արեգակին տակ՝ շատ բնա- կ միրգերն աշխանի . այս կարգին կը վերաբերին՝ կի- թիւնները , և ամէն ինչ որ կուրախացունէ կամ կը արրա- թեան կամեցած բաներէն մըն . . . . նոյն ինքն բարիք զի սպասարկողն է անոր և վարիչը՝ մամար , վասն- տեր մի և նոյն սեղանին վրայ դրուած ըլլալով՝ մին շուտ միւսն ուշ կիյանայ , և այս բանին մէջ բնառ չիկայ առարիբութիւն մը .» – ինչ որ քեզի կը պատահածի , ու

աշխարհ , կը պատշաճի ինձի ես . ինչ որ ժամադէպ է քեզի համար , ինձի համար ալ ո՛չ ուշ ո՛չ կանուխ է նոյնպէս : Ամենայժ ինչ , ո՛քնութիւն , քու եղանակնե- րուդ բերածէն պտուզ է ինձի համար . ամէն ինչ քենէ րուգայ , ի քեզ է , և առ քեզ կը դառնայ . ոմն կը- կուգայ , ի քեզ է , և առ քեզ կը դառնայ . ես ալ ոէր երբեմն , ո՛վ սիրելի քաղաքդ կեկրոփասի . ես ալ չէմ կրնոր ըսել՝ ո՛վ սիրելի քաղաքդ Արածաղդայ : » չէմ կրնոր ըսել՝ ո՛վ սիրելի քաղաքդ Արածաղդայ : Բովանդակին Ասոր մէջ ուր է վիշտ և վհատութիւն : Բովանդակին անհուն և երանաւէտ մտածումին մէջ՝ ընկլուզած է միտքի ամէն մտածում անձնական :

Մեծ ճիգ մըն է աս . և միտքէ՝ պաշարուած սահ- մանափակ գաղափարներով՝ ներքափակուած նաև բնա- բար ինքն իր մէջ՝ դժուարաւ կընդլայնի կընդարձակի , մոռնալու համար ինքնինքն անհունին սիրոյն մէջ : Մանաւանդ նուալումի և նուալումի այդ ժամանակա- թեան քան իր տկարութեան վրայ , և վերատին կիյայ անդորր տիեզերքի գաղափարէն իր թշուառութեան և ոչնչութեան ու րուականին : Եւ այս անգամ աղքիւր մըն միիթարութեան , որ դառն այլ զօրացուցիչ մխիթա- բութիւն մըն է : Մարդ ի՞նչ կարեւորութիւն կըրնայ տալ իր տիսրութեանցն ու անձուկներուն՝ երբ համեմա- տէ իր փոքրկութիւնն անհունութեան հետ : Ի՞նչ կարե- տէ ուրութիւն ունին հոգերն օրուան մը և հիւլէ-աբարածի ուրութիւն ունին հոգերն օրուան մը և միջոցին երկու ան- մը , որ կորսուած է ժամանակին ու միջոցին երկու ան- գունդներուն մէջ : «Յիշէ՛ , ո՛վ մարդ , տիեզերական տարածութիւնը , անորմէ ի՞նչչափ մաօն ունիս զու . յիշէ՛ տիեզերական տեւողութիւնն և անորմէ ունեցած թռու- թիկ բաժինդ : Խոկա՛ ստէլ եղած և ըլլալիք իրերուն յիշէ՛ բաժինդ : Խոկա՛ ստէլ եղած և վախստեան պարգութեան վրայ : յաջորդութեան և վախստեան արագութեան վրայ : Վասնզի աստի գոյութիւնը կը նմանի գետի մը , որ կը

հոսէ յաւիտենական սահանքի մը մէջ, և կենդանիք կը փոխուին յաւիտենական փոփոխութեամբ մը և պատճառ-ները կերեւութանան անթիւ այլակերպութեանց մէջ, և կա'յ անդունդ մը անյատա'կ, անցեալն և յետոյ ա-պագան ուր ամէն բան պիտի ընկղմի: Այսպիսի վիճակի մը մէջ՝ յիմարութիւն չէ ուռիլ հպարտանալ և ինքնա-տանջ թաղծիլ: «Ամենայն ինչ ի մեղ և մեր շուրջը՝ պիտի անհետի ընդհուպ, մեր մարմինները պիտի անհե-տեւզութեան մէջ... Ահ, այս ամենայն ինչն որչա'փ կան և մեռած»: «Հովք գետին կը փոէ անտառնե-րու տերեւները, անոնց պէս կըզզեանէ՝ մարդոց սե-Այս ամէնը կը ծնին կը ծլին գարունի մը մէջ, ապա տեղ կը բուցունէ ուրիշներ, Այս կարճ տեւողութիւնն խուսես կամ ետեւէն կը վաղես ամէն բանէ ամէն բա-թիչ ժամանակէն՝ ահա պիտի փակես աչուքներդ, և պիտի գայ» — «Մարդկայն կեանքի տեւողութիւնը՝ եր զգայնութիւնն՝ անկարողութիւնն մը, իր մարմինը՝ կառոյց մը որ կիյայ. իր հոգին՝ դարձդարձող շուքն-րու դատում մը. կարճ խոսք, իր հոգին մէջ ամէն բան կանցնի ու կը փախչի. իր կեանք՝ պատերա'զմ մըն է, հիւրի մը բնակչութիւնը, և գերեզմանէն ետքն

իր փառքը՝ մոռացում մը: Եւ ով կընայ փրկել զի՞նքն ամէնուն մէջ, մի՛ միակ բան մը, փիլիսոփայու-այս մէնուն մէջ, մի՛ միակ բան մը, փիլիսոփայու-թիւնը.» — Միիթարուեցէ՝ ուրեմն, հէ՛տ մահկանա-ցուք, ձեր տկարութեանն և ձեր մեծութեանն համար՝ տես անհունին, ուրկէ դուրս ցցուած էք և ի տես-անհունին, ուր պարունակուած էք, խորհելով յաւիտե-նական այն արեգակն որուն մէկ ճառագայթն էք և յաւիտենական այն գիշերն՝ ուր պիտի երթայ նուազի ճառագայթը: Ամէն կողմէ՝ անհունը կը սեղմէ ու-այդ ճառագայթը:

Այս մատածութեանց վրայ՝ տասնեւվից դարէ ի վեր չատ բան ուստանք. բայց այս վարդապետութեան բար-ձրութեանն ու ծշմարտութեան հասնող բան մը չենք զտած բարոյական փիլիսոփայութեան մէջ: Աշխարհը զարող օրէնքներուն մանրամասնութիւնը լաւագոյնս թափանցուեցաւ մեր գիտութեան կողմէն, բայց լեզուի թար-տարբերութեանէ մը զատ՝ այդ մեր գիտութիւնը դար-ձեալ կը յանդի այս փիլիսոփայութեան բովանդակին վրայ:

Լ.ամ.	Օր.	ԹԵՐԻՆԻ ՍԱՆԻ	ՆՈՅԵՄՐԵՐ		ԶԻԼԳԱՏԷ	ՕՐ 30	Տարի	Գ.ամբ
			ՕՐ 30	ՕՐ 30				
14	1	❖ Կ. Ա. Բ. զկնի Խաչի : Վեցերորդ կիւրակէ Եօթն շաբաթուց : Յն. Կողմայի և Դամիանոսի : ՏՃ. Զիլդատէ (օր 30) : Հը. Քառջեւ (օր 29) :						
15	2	❖ Պ. Սրբոցն Ստեփանոսի Հովովմայ հայրապետին , և Քահանայից , և Սարկառագայ և Ժողովրդոց որբ ընդ Նմա կատարեցան : ՀԱՐՍԱՆԻՔ :						
		Տար. Ծննդ. Մահուէլ Բ. Թագ. Փորբուկալի. 1889						
16	3	❖ Պ. Սրբոցն Ակիխիմիմոյ Եպիսկոպոսին , և Յովակիմոյ քահանային , Այիթալայ սարկուագին և Պղտոսնի վկային :						
17	4	❖ Պ. Պահ. Տոմի Տրէ (օր 30) :						
18	5	❖ Պ. Սրբոց հայրապետացն Մետրոպոլիտոսի , Աղքաքանդրոսի և Պղպասի Խոստովանոցին . և Խոտարացն Մար. Կիանոսի և Մարտիրոսի :						
		Տար. Գանի. Հօքրն է. Թագ. Նորվեկիոյ. 1905						
19	6	❖ Պ. Պահ. Պահ. :						
20	7	❖ Պ. Սրբոց Հրեշտակապետացն Գարբեէլի և Մէքսուէլի և ամենոցն Երկնային զօրաց :						
21	8	❖ Պ. Պահ. Թ. զկնի Խաչի : Եօթներորդ կիւրակէ Եօթն շաբաթուց : Յն* Սիրայէլի Հրեշտակապետին և ամենոցն Երկնային զօրաց : Լա* Խնձոյումն Ս. Աստծին :						
		Պ. Առ. Քու. Ժամ 2 , ըովէ 37 Խառնակ օղ						
22	9	❖ Պ. Սրբոցն Մելիտոսի Անտիոքյ հայրապետին , և Միւս Մելիտոսի Եպիսկոպոսի : ՅԱՐՍԱՆԻՔ : Յայսմ. Տրէ (օր 30) :						
23	10	❖ Պ. Սրբոցն Դեմետրեայ վկային , և Բասիլիսկոսի քա- հանային :						
		Տար. Գանի. Վիլիմիան Թագուհուոն Հոլանտայի. 1889						
		○ ՅԱղեղնաւորն Ժամ 7 , ըովէ 30						
24	11	❖ Պ. Պահ. Պահ. :						
25	12	❖ Պ. Սրբոցն Գուրիասայ , Սամննասայ , Արիւայ սար- տովանողի և Հիւսիքոսի վինաւորին , Մանկոն Խոս-						
		կաւագին , Ռումնոսի միայնակեցին , Մանկոն Խոս-						

Լ.ամ.	Օր.	ԹԵՐԻՆԻ ՍԱՆԻ	ՆՈՅԵՄՐԵՐ		ԶԻԼԳԱՏԷ	ՕՐ 30	Տարի	Գ.ամբ
			ՕՐ 30	ՕՐ 30				
26	13	❖ Պ. Պահ. Պահ. : Յն* Յովլյաննու Ոսկերերանին :						
27	14	❖ Պ. Սրբոց առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի : Յն. Փե- լիպպոսի առաքելոցն , և Բարեկենդան քառասնօրեայ պահոց Ծննդեանն Քրիստոսի :						
		○ Լր. Լս. Ժամ 18 , ըովէ 5 Խառնակ օղ						
28	15	❖ Պ. Պահ. Ջ. զկնի Խաչի : Բարեկենդան պահոց Յինա- կաց : Յն. Ակիղնա Բառանօրեայ պահոց Ծննդեանն Քրիստոսի : Լա. Ա. կիւրակէ Գալատեան , որ է սկել- բըն կամաւոր պահոց Ծննդեանն Քրիստոսի :						
29	16	❖ Պ. Ա. օր պահոց Յինակաց : Ա. Համիրայ (օր 30) :						
30	17	❖ Պ. Բ. օր պահոց Յինակաց : Լա. Անդրէի առաքել-						
31	18	❖ Պ. Գ. օր պահոց Յինակաց : Լա. Դեկտեմբեր:						
32	19	❖ Պ. Գ. օր պահոց Յինակաց :						
		Տար. Գանի. Ֆրանն-Եօգլէ Ա. Կայսեր Աւստրիա. 1848						
33	20	❖ Պ. Ե. օր պահոց Յինակաց :						
34	21	❖ Պ. Բնձայումն Ս. Աստուածածնի Երից ամաց ի Բնձայումն : Յն* Բնձայումն Ս. Աստուածածնի :						
35	22	❖ Պ. Ա. Յինակաց :						
		○ Վ. Բ. Բնձ. Ժամ 1 , ըովէ 32 Անձեւ եւ նողիմ						
36	23	❖ Պ. Սրբոց Կուսանացն Յուլյաննեայ և Վասիլյաչույ:						
37	24	❖ Պ. Սրբոցն Ղուկաննոսի քահանային Տարածոսի , և Անեսինայ վկայից : Անեսինայ և Պրոռամի , և Անդրնիկիսի վկայից :						
38	25	❖ Պ. Պահ. Պահ. : Հը. Խանուկալ , որ է Գանախլ պայտամլու :						
		Տար. Գանի. Կիւրակ Ե. Թագ. Նուէսի. 1907						
39	26	❖ Պ. Սրբոցն Կղեմայ հայրապետին , և Բագարատաց :						
		Տար. Գանի. Կուսանացն Եպիսկոպոսի :						
40	27	❖ Պ. Պահ. Պահ. :						
		Տար. Գանի. Լեոբոլ Բ. Թագաւորին Պելիխայի. 1865						
41	28	❖ Պ. Սրբոց առաքելոց և առաջնի լուսառութացն մերոց Թագեսոսի :						
42	29	❖ Պ. Պահ. Բ. Յինակաց :						
43	30	❖ Պ. Սրբոցն Գենարիսի եպիսկոպոսին , և Մերկերիսի գինաւորին : ՀԱՐՍԱՆԻՔ : Հը. Բէրէթ (օր 29) :						
		○ Յն. Լս. Ժամ 5 , ըովէ 29 Հողմունը եւ անժեւը :						

# ՄԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐԱԳԻՐԸ

(ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ)

## ՆՈՅԵՄԲԵՐ

(Գյուիմը ներմակ պօնէով, սեւ խուռը խաչ մը կուրծքին, երկայն սեւ համրիչ մը բովն ի վար կախուած, կուտ սկառդիններով օրիորդ մեմախօսը՝ սենեկին, կամ սալօնին մեջ կը կենայ, զլուխը քիչ մը վար, վախկոս եւ ամչկոս նայուածներ ձգելով չորս դին: Հինգ վայրկեան այսպէս մնալէ վերջ կսկսի):

**Մայրապետ . . . :** (Զեռքի ներմակ բաւեկինակը աշերուն կը տանի եւ երկար տունչ մը կ'առնէ): Ի՞նչ տըխուր անուն, ինչ սոսկում բառ մէկու մը համար՝ որ կը զգայ, կիմանայ և այդ զգացումը ստիպուած է իր մէջ պահել, ժածկել, և անխօսուկ կերպով տանիլ էր հետ մինչեւ գերեզման:

**Մայրապետ . . . :** կին մը՝ որ ինքզինքը նուիրած է չարչարուելու ուրիշներու համար, կին մը՝ որ ուխտած է իր կեանքը զոհել իր ընկերներուն համար, կին մը վերջապէս՝ որուն կոչումն է իր կեանքով ուրիշները փրկել . . . ինչո՞ւ:

Հոս, հոն, ճամբան, ուր որ ալ ըլլայ, ով որ հանդիսպի մեղի, չոր ակնարկ մը միայն կը ձգէ մեր վրայ, ատելութեան, նողկանքի նայուածք մը, որուն մէջ շատ դիւրին է՝ կարդալ տիսուր խորհրդածութիւններ մը մեր հասցէին, լաղիր արաքներու մեղքը՝ քաւելնուս հուըն-տումը՝ ցողացնելով՝ անոնց մէջ :

**Մայրապետ . . . :** կին մը՝ անպէտ ու անպետ, կին մը՝ ինկած, վտարուած մարդկային ընկերութիւննէն, կին մը՝ զրկուած ընտանիքի հաճոյքներէն, կին մը՝ հեռացած կեանքի անուշ պէսպիսութիւններէն: Ծնչաւոր կենդանի մը, բանաւոր էակ մը, որ դատապարտուած է տանիլ իր մեղքը ուսին վրայ, երկնաւոր պատիմէն զատ՝ աշխարհային տանչտնքներն ալ կրելու մատնուած . . . :

**Մայրապետ . . . :** սոսկում անուն, տիսուր պատկեր, կեանքին ու մեղքին խաչանիշը, զգուսնքին մարմնացումը, մահուան ուրուականը, ուրկէ կը սոսկայ հանրութիւնը, ուրկէ հեռանայ կուզէ կոյս անմեղութիւնը և որուն չար աչքով կը նայի սեւ բաղդը . . . (Արցունելով լիցուն աշենցր կը սրբ եւ պահ մը բովին կախուած համրիչին կը տանի ձեռքը, միօտ զիսիկոր):

**Մարապետ . . . :** մեղաց վիունջ մը, որուն ծաղիկները ժամանակէն շատ կանուխ խամրած, թարշամած են, անբոյր, անտեսք ծաղիկներ, որոնք նետուելու դատապարտուած են . . . թերեւս մէկ երկու ժամ կամ մէկ երկու օրուան վայելք մը չնորհած ըլլալնուն համար ուրիշին . . . (Զայնը կը բարձրացնէ եւ կը գոռայ). Այս ուրիշին . . . անծանօթին . . . դահիճին . . . անոր հաճոյքին, անոր վայելքին հայար, այս՝ անոր կեղծ ու պատիր խօսքերուն, անոր վաղանցուկ անուշութեան երեսէն, անոր հաճելի ըլլալու մեծ սխալին հետեւանօք . . . անո՞ր . . . :

**Ո՞վ է ա՞ն . . . չ՞ք ուզեր իմանալ անոր իսկութիւնը, չէ՞ք ուզեր հասկնալ թէ ո՞վ է ան որ համարձակած ըլլայ թառամեցնել այդ փունջը՝ որուն վարդերը վաղը թերեւս կոկոններ արձակէին, ուռաճանային և մէկի տեղ շատ մը վարդեր բացուէին մին միւսէն գեղեցիկ, մին միւսէն հոտաւէտ, մին միւսէն հիսաքանջ . . . ը-**

սէք, չէք ուղէր լսել այդ արիւնարիու հրէշին ո՞վ ըլլալը . . . :

Գաղտնիք . . . քսամնելի ոճիր մը որ աւաղ, սա սեւ լահոռին և ծերմակ պօնէին տակ պիտի մնայ մինչեւ որ օրը՝ ժամը համի, հողին տանջանքէն վերջ երկինքի պատիժին փոխաղրուելու համար:

Ա՞ն . . . , անձանօթը, սեւ ստուերը, կապարէն ծանր, դանակէն սուր, և թոյնէն աղղեցիկ, մահուան դատապարտած է զիս, ալ խոստովանիմ, ա՞ն . . . այո՛, ա՞ն իմ ցութ ծերմակ կուսութիւնս, բերած նետած է տանջանաց փշալից տարտարոսին մէջ, ամօթը ճակտիս, մեղքը ուսիս դնելով . . . ա՞ն . . . :

Պէտք է գիտնաք որ, ոչ ոք մայրապետ կը ծնի, բայց բաղդն է որ ոմանք մայրապետ կրնէ:

Հիւանդանոցները շարք մը մասնածիւղեր ունին, դիւանարները, հիւանդները, ծերերը, վիրաւորները, զատ զատ կը դարմանուին իրենց յատուկ յարկարաժիններու մէջ, իսկ մայրապետը որ զանոնք դարմանելու պաշտօն ունի, խեղճը չգիտեր թէ ինքն ոլ տեսակ մը հիւանդ է, տեսակ մը խելագար, որ հոդ կը մնայ դարմանուելու, ապաշխարելու համար: Մայրապետին դեղը աղօթքն է, անով միայն կրնայ բժ, կուիլ: (Քիչ մը կը կենալ, աչերը վեր կը վերցնէ եւ կրկին կսկսի խօսիլ):

Թէ ի՞նչպէս եղաւ որ մայրապետ եղայ . . . քանի որ մայրապետը մայրապետ չի ծնիր, վերջէն կըլլայ ըսի քիչ մը առաջ, չէք հետաքրքրուիր, չէք ուղեր հասկնալ թէ ծեր աղախինը ի՞նչպէս գլուխը անցուց սա ծերմակ պօնէն և մէջքն ի վար կախեց օձի պէս երկայն համրիչը . . . ինչպէս . . . : (Քիչ մը կը կենալ եւ չորս դին կը նայի): Խօսո՞ղ, հարցնո՞ղ, հետաքրքրուող չիկա՞յ . . . պռափօ, ըսկը է ձենէ և ոչ մէկը՝ կը փափաքի տեղեկա-

նալ իմ քսամնելի գաղանիքիս, որուն զո՞լ . . . հո՞ս ձեր առջեւ կը կենայ . . . ոչ ոք հէ . . . :

Լա՛ւ, ուրեմն պատմեմ, յայտնեմ մտիկ ըրէք, որպակս զի փորձառութիւնը զձեկ յորձանքէ փորձանք չի տանի:

Դինեպանի մը աղջիկն ևմ եռեսուն երկու տարեկան, մայրս տղայ տարիքիս եմ կորսնցուցած, աղդականներս՝ որոնք են չեմ զիտեր, ոչ հիմա և ոչ ալ — չին ոէժիմի օրով պիտի ըսէի, այնքան վարժուած է բերանները այդ բառը կրկնելու — այո՛ և ոչ ալ պղտիկ տղայ տարիքիս: Տասներկու տարեկանէս տան տիրուհի եղած եմ, և խոնամած՝ հայրս, որ օրը վեց ժամ քնանալու համար տուն կուգար, օրուան միւս ժամերը առանձին, մինակուլ կեցած եմ տանը մէջ, կերակուրի և տան կառավարութեանց պարապելով:

Հայրս, որուն ինչ եղած ըլլալը, ողջ կամ մեռած ըլլալը չեմ գիտեր հիմա, առաւօտուն կանուխ տունէն կը մեկնէր, գիշերուան կիսուն դառնալու համար:

Տարիները՝ ձիւնէ գնդակի պէս կեանքիս վրայ կը բարդուէին, ու ես լեռան վայրի ծալիկի մը պէս արեւին ու անձրեւին տակ կը մեծնայի, կը զարգանայի ֆիզիքապէս, բայց կրթութիւն և ուսում բոլորովին անձանօթ բառեր էին ինձ համար:

Հայրս, տանը հացը և վարձքը հազիւ կրնար յայթայթել, ուր մնաց իմ դպրոցական ծախքս հօգալը: Հօրս և իմ մէջս չորցած, ցամքած էր որդիկական և ծնողական սէրը, անիկայ սպասուհի մը տեղ դրած էր զիս, ու ես զինքը բարուն կըմբռնէի: Իրիկունները, մանաւանդ ձմռու գիշերները երբ զործէն դառնար, իմ պարտքս էր, ձեխոտ ոտնամանները քաշել հանել, ինչպէս նաեւ գուլպաները և միշտ պատրաստ տաք ջրով

Հուալ իր սառած ոտքերը, հանուեցնել գիշերնոցը հագցընել, և ափսէով մը կերակուրը մօար դնել, որպէս զի ուսէ, հազար և մէկ դիտողութիւններ տեղացնելով զւիտու, դիտողութիւններ՝ որոնց պատասխանատու չէի կը նար ըլլալ իմ անփորձ տարիքիս մէջ անշուշտ:

Ա՛յ ։ ։ վէպ չէ ինչ որ կը պատմեմ ձեզ սիրելիք, ոչ ալ շինծու, այլ ապրած կեանքի իրական պատկերներ են ասոնք, որոնց վրայ կարժէ պահ մը ծանրանալ ու մտածել:

Կիրակիները երբ կանուխ կոնթննայի առանին գործերովս զբաղելու, հոգիս կը թռութառը, սիրսս կը սեղմուէր, կը հատնէի, ի տես տարեկից օրիորդներու, որոնք աղօթագիրքերնին ձեռքերնին՝ եկեղեցի կ'երթային, մաքուր ու նոր հագուստները կոնակնին, որոնց ետեւէն տանտիլին մայրենին կը քաւէր զաւեկի սէրը որւին մէջ, ինչպէս նաեւ ուրախութիւնը ալքերուն: Ասոնք կերթային Աստուծոյ առջեւ երկու ծունդ աղօթք ընելու, և յայտնելու իրենց երախտագիտութիւնը երկնաւորին, որ իր ձեռքը գր ած էր վրանին, մինչ ես, ոչ իսկ կ'օշիկ ունէի գուրս ելլալու, և ոչ ալ պասմա բէշ մը սրունդաներս պարտելու համար: (Գրպանին բաւեկինակը կը հանի եւ աշխերուն կը տանի):

Գիշերները ստիպուած ըլլալով սպասել հօրս անկողին մտնելուն, անմիջապէս պատուանին առջեւ կերթայի նստիլ և դիտել ձմրան մութ և ամրան աստեղազարդ երկինքը, արտասուել և ողբալ սեւ բաղդս որ չեմ դիտեր ի՞նչ, և ո՞ր յանցանքիս համար զիս կը պատժէր անդժօրէն:

Գինետունը որ մեր գէմն էր քիչ հեռուն, միշտ լեցուն արփեցողներու ստոր դասակարգով մը, իրենց անտանելի գոռութ գոչումներովը, անիմանալի հայեռւչե-

րովը և լովիրը երգերովը կարծեա ըսել ուղէին «խենդաղլիկ», ի՞նչ է կեանքը, եթէ ոչ սին ու պատիր պատաղին, կերներու շարք մը, որ մարդուս աչքերուն առջեւէն կանցնի, մերթ ժպիտ և յաճախ արցունք դնելով անոնց մէջ»:

Ու ժամերով կը դիտէի կը լոէի այդ խել խօլ կեանքին յարափոփոխ անցքերը, մինչեւ որ քուն յաղթելով ամէնուն՝ իյնայի բարձիկիս վրայ, շատ հեղ առանց անկողին մտնելու:

Ա՛յ ։ ։ ի՞նչ դառն է ապրիլ առանց մօր մը գուրգուրոտ թեւերուն, ձենէ ոչ ոք զիտէ այս դառն պարագան, թերեւս հազարէն մէկը երկուքը հազիւ վիճակակից եղած կրնան ըլլալ ինծի: Առանց մօր մը հսկողութեան, եթէ մարդ հրեշտակ ալ ըլլայ, դարձեալ տեղի կուտայ և սատանան իր յաղթանակը կը տանի, ւքելով ենթական, գետնագարը զզուանքներու մեղքերու մէջ, ահա զոհը (ինքիթիք կը ցուցնէ):

Ալ բաւական է կարծեմ, որչափ խորհրդածեցինք, հիմա, պատմենք բուն իսկ պատճառը, որով գլուխս ներմակ և կոնակու ալ սեւ անցուած է:

Տասն և չորս տարիքիս մէջ, զինեպանի մը զաւակըն էի, որը աննեցուկ, ինչպէս քիչ մը առաջ ըսի, տանը ականակին, մէկը չիկար որպէս զի դիտողութիւն մը ընէր իմ ծուռ կամ շիտակ ընթացքիս: Ինդրեմ պըզտիկները գուրս հանեցէք, որպէս զի կարող ըլլամ պատմութիւնս շարունակել իր իրական փուլերուն մէջ: (Գիշ մը կը կենայ, որպէս զի սալօնին մէջ պզտիկները դուրս ելլեն):

Ամէնքդ ալ դիտէք ազնուուհի քոյրերս, թէ ոէք օձը ձիշդ այդ ապրիփին կարթննայ և իր նախնական թեթեւ խայթոցներովը կը հրահրէ, կը վառէ սրտերը:

Ահա իմս ալ ծիշդ այդպէս եղաւ : Տակաւ կը զգայի՞նէ աչքիս ամէն տեսածը մի եւ նոյն աղդեցութիւնը չէր ընէր վրաս, պատկերներ կը տեսնայի, անցքեր կը դիտէի, որոնք բան մը չէին ըսէր ինձի, և չէի հետաքրքրուէր և անդին կարգ մը պատկերներ, դէմքեր ալ կը տեսնէի, որոնց հանդէպ անտարբեր չէի կրնար մնալ, և ցնցուէի, կը բռնկէի, և ամբողջ կազմովս կը փոխուէի, առանց գիտնալու թէ ինչո՞ւ . . . : Մեր տանը առջեւէն շատ մը մարդիկ կանցնէին, ոմանց անտարբեր կը գըտնուէի, և ոմանց ետեւէն կը նայէի, մինչեւ փողոցի անկիւնը, և սիրտս բլ՛ը մը կը լար, առանց գիտնալու թէ ինչո՞ւ . . . : Շատ մը երիտասարդներ կը տեսնէի փողոցին մէջ, որոնք առանց ինձի նայելու՝ հոս հօս, աջ ու ձախ կը դիմէին, ու ես իրենցմէ մէկքանիին կը նայէի և ակամայ աչքերս վրանին կը մնար, մինչեւ որ կորսնցնէի զիրհնք, առանց զգալու և գիտնալու թէ ինչո՞ւ . . . :

Այս վիճակիս մէջ մնացի ամբողջ տարի մը, ու ես որ բնաւ չէի գիտէլ թէ ի՞նչ ըսել է բուալիքը, անզգաւար սկսած էի հայելիին դէմն անցնիլ օրն ի բուն, և որուն համար շատ անգամ ծեծ ալ կուտէի հօրմէս, առանին զբաղումներս ետ ձգած ըլլալուս համար : Մաղերըս, դէմքս, հագուստներս, գուլպաններս նախսկին ըլլիթիութիւնը չունէին ալ, մեծ խնամք կը տանէի կոտուանց գիտսալու թէ՝ ինչո՞ւ . . . :

Երբ փողոցի դուռը կը կենայի իրիկունները, շատեր կանցնէին մօտէս, բայց անցնողներուն մէջ մէկ երկու քին հանդէպ կը կարմէի, տաք արիւն մը գլուխս կը մնուեական դալկութեան մը, սիշտ առանց գիտնալու թէ՝ ինչո՞ւ . . . :

Վերջապէս բուտույի ալ վարժուեցայ, սիւրմէ ալ քաշեցի, կարմիր ալ քսեցի, կուրծքերս ալ թխեցի, քալուածքիս նոր հով նոր ձև տօւի, և գեղեցիկ երեսալու համար ոլինչ լինայեցի, այս անգամ գիտակցարոր որովհետեւ գիտէի թէ . . . ի՞նջՈի :

Հօրս գալէն առաջ, ալ սովորութիւն ըրած էի հագուիլ և քրուիլ և աթոռով մը տանը դուռը նստիլ մինչեւ գիտերուան յառաջացեալ ժամերուն, անպախ, անվրդով, ոչ գալիքին գիտակցութեամբ և ոչ ալ ըլլալիքին :

Ա՛խ . . . մ'ամօթէք, դուք ամէնքդ ալ այդ դժնդակ,

արդ վախու տարիները անցուցած էք, բայց միշտ սաստող, զսողող մօր մը շանթին աշքերուն և փրկարար թեւերուն տակ, մինչ ես, վրաս նայո՞ւ՝ ցերեկը արեւը ունէի և գիշերը՝ խաւարը՝ քստմնելի մութը միայն :

Նիքոլին . . . (այս անունը արտասանած միջոցին կը ցնցուի եւ երկու ձեռքերը իրար բերելով կուրծին կը տանի եւ վեր կը նայի աղեցարկու ձեւով մը .) Յոյն տանի եւ վեր կը նայի աղեցարկու ձեւով մը .

Վաճառականի մը տղան էր, ամէն օր առաւօտ իրիկուն գեր տունէն կանցնէր վեր նայելով, ժպտելով, քաշող, սատկցնող աշքերը վրաս ձգելով: Ծիք, բառին կատարեալ առումովը, հարուստ, երիտասարդ և աղնուական :

Ա՛խ . . . աղնուական, այո՛, աղնուական ալ . . . :

Առաւօտները խենդի պէս, ինչպէս և իրիկունները կը վազէի դուռը, անոր մէկ ժպտիխն, մէկ նայուած քին,

մէկ խօսքին արժանանալու համար և անգամ մը որ անացնէր իր սովորական անուշ նայուած քը ձգելով վրաս,

ալ սոխակին պէս խօսուն և թիթեռնիկին պէս թեթես կը վարայի և սիրով կը տանէի այն բոլոր առանին գործերը որոնք հուժկու ձեռքերու կը կարօտէին :

Ա՛խ նիքոլին . . . , այդ անունը արտասանած ժամնակս ոտից ցգլուխ կը ցնցուէի, և երբ մտքէս անց-

Նէր անուշ և երազոտ քուն մը զիս կը թմբեցնէր պահ  
մը և արքայութեան կեդրոնը կը գտնէի ես զիս:  
Երկուքս ալ բռնուած էինք իրարու, խօսք չէր:  
Իրիկուն մը ուշ ատեն երբ մութը լաւ մը ստուե-  
րած էր չորս զին և թէ տեղատարափ անձրեւ մը թոյլ  
չէր տար թաղեցիներուն ստէպ անցնիլ փողոցէն, և  
նորէն դրան առջեւ իրեն կը սպասէի անձկանօք: Հե-  
րագ գէպի մեր տան կողմը սկսաւ յառաջանալ: Նիքօ-  
վին էր, իրիկուան այդ ժամուն, ա՛ն մինակ, անգամ մը  
կւգար կ'անցնէր մենէ զիս տեսնելու, դէթ աչքով առ-  
գէպ: Անձրեւը կը տեղալ ուժգին, մինչ ես դրանը ներսի  
անոր սիրոյն, Մէկ վայրկենէն Նիքօլի հասաւ մեր տան  
մօտ, և փոխանակ անցնիլ երթալու, յանկարծ կանգ ա-  
նուաղիլս բան մը ըսկէ չէր, Նիքօլին, որուն մէկ նայ-  
մօտ, հազիւ դիզ մը բաց:

Օրիորդ, ըստ ան մեղրանուշ շեշտ մը դնելով  
տեսնէր, զգացումներուն համապատասխան՝ և կարելի է  
քիչ մ'ալ աւելին կրելնիդ կռահած եմ ատենէ մը ի վեր...  
Պատասխան մը տուէք նոյն իօկ սա մութ երկինքին վը-  
մէն բան պատրաստած եմ, կեանքս ձեր մէկ պատաս-  
կութիւն կամ մահ, երկուքին մէկը...  
Կարծեցի պահ մը թէ մօրէ մերկ, սառնարանի մը

խորը կը գտնուիմ... այնպէս սկսայ դողալ առանց կո-  
րինալու նոյն իսկ շունչ մը առնել, գամուած մնացի իր  
դէմ աչքաբաց մեռելի մը պէս, որ նոր փշած է հոգին:

— Խօսք, հաւատար մութիւն... չնորհ, ըստ ան,  
երբ տեսաւ թէ ամօթէս չէի կրնար նոյն իսկ ժամիտ մը  
կուանակել իր այնքան տաք և վճռական առաջարկու-  
թիւնակել իր այնքան տաք և վճռական առաջարկու-  
թիւն, խօսեցէք աւելցուց Նիքօլին, խօսեցէք, որովհե-  
տեւ ձեր ձակատագիրը, ձեր մէկ խօսքէն պիտի վճռուի...

Իր խօսքերը և թրթուն ձայնը մեղեղի մը պէս  
կը հնչէին ականջիս, աչքիս առջեւ դրախտ, դժողք, եր-  
կուքը մէկ կը բացուէին և ինձի կը մնար ընտրութիւնը  
աստոնցմէ մրոյն մէջ նետուելու համար, Անապատի մրրիկ-  
ները, ովկիանոսներու փոթորիկները բան մը չէին արժէր  
անոր քով՝ որ գանկիս մէջ կ'անցնէր այդ պահուն, մէկը,  
անոր քով՝ ձեռք մը թեւէս բռնած կամ զիս գերեզմա-  
նուաղիլս բան մը ըսկէ չէր, կամ երկնից հօթերորդ խաւե-  
նէն դուրս կը քաշէր և կամ երկնից հօթերորդ խաւե-  
նէն կը բարձրացնէր..., Ո՞րն էր, ի՞նչ պէտք էր որ ընէի,  
կան այդ հարցին, ի՞նչ...:

Թաւիշի պէս նուրբ ու փափուկ ձեռք մը իմիննե-  
րուս հափիլը զգացի, թեթեւ սեղմում մը յոյզէ յոյզ տա-  
րաւ զիս, ու մինչ յապուշ կրթած իր վառ աչքերուն  
մէջ կը նայէի, որոնցմէ սէր դուրս կուգար, աւելցուց՝

— Վաղը երկուն հոս այս ժամուն պատրաստ պի-  
տի ըլլաք, զնեկ պիտի աղատեմ այլեւս, դուք մեր  
տունին հարսը պիտի ըլլաք, ծառաներ, կառքեր պիտի  
ունենաք ձեր որամագրութեան տակ, և այս քսանեւչորս  
ժամուան մէջ, իրաւ հիմա երազ մը ձեղ համար, բայց  
վաղը իրականութիւնն իսկ պիտի ըլլայ, Մտածելու պէտք  
չունիք, անձնասպանութեան սոսկալին պիտի ըրած ըլլաք  
երբ հոս չի գտնուիք վաղուան այս ժամուն...: Հետո

պիտի գաք, հետո պիտի ըլլաք, և յաւէտ երջանիկ : Այս խօսքերէն վերջը, թեթեւ համբոյր մը տուաւ աղ ձեռքիս, տաք շրթներ թրթուացին մորթիս վրայ... մահը աչքիս դիմացը ցցուեցաւ դոզցես այդ պահուն, սարսուացի, դոզցի և պահ մը աչքերու մթադնեցան, ու երբ սթափեցայ, երազի մը և իրականութեան պատ- րանքին մէջ ոչ ոք կար դէմս :

Անձեւը ալ աւելի սաստիկ սկսած էր տեղալ երբ քաշուեցայ սենեակ ու ինկայ բազմոցին վրայ յոյզի և արցունքներու մէջ, առանց գիտնալու ընելիքս, իսելա- ցնոր վիճակ մը ուր մնացի մինչեւ այն՝ ատեն երբ հայրս բեկաւ դուռը զարնել գիշերուան կիսունմօտ ըստ սովո-

Սյդ պայմանադրեալ քսանեւչորս ժամերը ի՞նչպէս անցան... չէք կրնար երեւակայել, այլ միայն ես գի- տեմ թէ ինչ խլճի խայթերով, ի՞նչ հոգեկան տանջանք- խղճալի կեսնքիս փոփոխութիւնը, երկուքը մէկ կը մորակէին կարծես ժամ առաջ նետուելու դուրս, ան- դունը կամ դրախտը :

Հետեւեալ օրը ճակատագիրս վճռուած էր : Երե- պիին ուշ ատեն երբ յութցաւ, սենեակս առանձնացայ, առջեւ, արցունքու աչքերով ներողութիւն խնդրեցի կրկին համբուրեցի, լացի, ողբացի այն կեանքին վրայ ցած է և մութն ալ լաւ մը կոխած, թեթեւ շալ մը գլուխս առած, փողոցին դրան մօտեցայ : Հեռուէն սի- պէս վրաս յարձակեցաւ երբ զիս կազմ ու պատրաստ

դրան մօտ գտաւ, քաշեց թեւերէս, լուռ անխօս տասը քայլ առինք փողոցին երկայնքը և հասանք գոյ կառքի մը մօտ, որուն կառապանը տեղէն ցատկերով անմիջա- պէս բացաւ դուռը ու մենք երկուքս ներս մտանք, դուռը գոցուեցաւ և ձիերը քառամբակ սկսան սուրալ մութին մէջ . ուր, չէի գիտեր :

Ալ անձիս տէրը չէի, ծախուած պուպիկ մը դար- ձած էի Նիքոլիին քով որուն կը պարտէի կեանքս, ա- պագաս :

Ասիկայ մեղքիս առաջին վարագոյրն էր : Այնքան կորսնցուցեր եմ ես զիս որ չեմ գիտեր որ- չափ տեւեց մեր այդ գիշերացին ճամբորդութիւնը, դո- ղերու, սիրտհատնումի վերջապէս կէս մեռել ճամբոր- դութիւն մը որ չէք կրնար երեւակայել ինչ չարչրկող, ինչ հատցնող վայրկեաններ անցնել տուաւ ինձ :

Կառքին մէջ Նիքոլին, անուշ և քաղցր փաղաքը- չանքներով հանդարտեցնել կը ջանար զիս ձեռքս իրեն- ներուն մէջ առած, մերթ համբոյրներով ու մերթ թե- թեւ սեղմումներով սիրտս կասդնտէր : Կուրծքս փոթոր- կայոյզ ծովուն պէս կ'ալեկոծուէր, և այն վայրկեաննե- րուն՝ ուր զզումի գալով պահ մը կառքէն դուրս նետ- ուելով, կրկին իմ խրճիթս դառնալ ու հօրս կերակուրը պատրաստել կուզէի, յանկարծ բուռն սէրը իր երկաթ թաթերը վրաս դնելով կարծես կը կապկապէր զիս, կը բոնէր և ականջիս ձայն մը սիշտ կը փսփսար « սէրը ծնողք չի ձանչնար, անիկայ կեանքի էն անուշ պառուզն է դոր պիտի ճաշակես և համոզուիս ... » :

Յանկարծ կառքը կեցաւ . կառապանը բացաւ դու- ռը ու մենք վար ի՞նելով դէմերնիս բաց գտանք տան մը դուռը որուն առջեւ ծերուկ կին մը ցուրտէն թեւերը իւաչաձեւ կուրծքին վրայ՝ զմեղ ժպտուն դիմոք ներս

հրամցուց։ Սանդուխին գլուխը պղտիկ կազ մը կը վառէր։ Տանը բակը շատ պարզուկ, հազիւ չորս մէթր քառակուսի շրջաբակ մըն էր և սանդուխիը հինգ վեց ոտք, ուրկէ վեր ելլալով ինքզինքնիս գտանք կոկիկ սինեակի մը մէջ որուն մէջտեղը կրակարան մը դրուած կար, և անկիւնը... մահճակալ մը։

Նիքօլին ներս մանալուն պէս պոօին վրայ դրած  
քօնեակին շիշը ձեռք առաւ, երկու հատ ինք խմեց և  
հատ մ'ալ ինծի հրամցուց զոր մերժեցի: Սրբունքը աշ-  
քերէս կը վազէր և չնչառութիւնս բռնուած էր գող-  
ցէս: Սոսկում մը, վախ մը պատած էր սիրտս և հա-  
կառակ երկու մոմի լոյսերուն ինքզինքս զնտանի մը  
մէջը կը կարծէի:

(Հոս պահ մը կը կենայ, երկար տունչեր կ'առնէ,  
չորս դին կը նայի, եւ իր վերջաբանը կը տարունանի սա-  
պիս)

Այդ գիշերուան արշալոյսը չատ ուշ ծագեցաւ,  
ու երբ աչքերս բացի, հին աշխարհէն նոր աշխարհ փու-  
խադրուած դատայ ես զիս։ Գոյ վարագոյրներուն ետե-  
ւէն ձմրան արեւին տկար ճառագայթները ցիրուցան  
մաղերուս վրայ թափած էին, գրէթէ մերկ, մէկ քամբ-  
զօլ ըր նուի մը, ան ալ կիսով չափ մարմինս լքած մէկ  
կողմ քաշուած էր, չուղելով կարծես իր սպիտակ մաք-  
րութեանը և անմեղութեանը մէջ պարփակել . . . մար-  
մինս որ յօշոտուած դիմակի մը պէս նետուած էր բաժպակ-  
ներու խորը։ Ոչ ոք կար սենեակին մէջ, քստմնելի լը-  
ռութիւն մը և գերեզմանային պաղութիւն մը կը տիրէր  
միահեծան։ Ա՞ւր էի, ո՞ւր կը դանուէի, ո՞ւր էր Ան . . .

ախ, ան՝ որուն յօշոտիչ ձիբաններուն և սեղմումներուն  
ցաւերը դեռ չէի մոռցած, ուր էր... Ու մինչ ծունգի  
գալով քրիզմային առջեւ որ կը պլալար գլխուս վե-  
րեւ, մեռնելէ առաջ զղչումի, մեղայի աղօթք մը կը  
մրթմրթայի Աստուծոյս, յանկարծ նախորդ գիշերուան  
պառաւը ուսիս գակելով ըստ «հայոէ աղջիկս, հագուէ  
ու գնայ, որովհետեւ հոս եկողները պէտք է լուսը չի  
ձեղքուած մեկնին, մինչդեռ տես կէս օրուան մօտէ...»

Հաս եկողները . . . :

Հասկցած էի ամէն բան, փորձառութեան թուսալլը  
դաւաթը մէկ ու մաէն խմած ըլլալս կռահեցի, մէկ վալր-  
կեանի մէջ գիտցայ թէ ինչ ըսել է կենդանի մեռելը . . .  
Խարուած էի, իմ տասնեւթեց գարուններուս անդրանիկ  
պտուղը գողցուցած էի սրիկայի մը, գազանի մը, ան-  
աստուածի մը:

Եւ գիտէք, ինձ պէս անփորձ յանցաւորսմբու մարմար հողը անդամ իր ծոցը չի բանար ծածկելու մարմինը մեղապարտ, մահը երջանկութեան զէնիթը պիտի վլար ինձ համար եթէ շուտ համնէր, գեռ այդ սպանդանոցէն դուրս չելած, բայց պէտք էր որ ես իմ պատիմ հոգին վրայ կրէի և ոչ թէ տակը:

Գլխարկ մանթօ հոդ ձգեցի, պարզ շալ մը կրաքանչ  
երկրաւոր դժողվը՝ դուրս նետուեցայ մինչեւ իրինկուն  
անձրեւին ու հոգին կուրծք տալով պտտկեցայ անձա-  
նօթ թաղերը, սպասելով որ մութը կոխէ։ Տունը ինծի  
համար գոց պիտի ըլլար անպատճառ, ծառի մը խոռո-  
շին, մեծ ան ւակոսի պէս պէտք էր որ գիշերէի։

Ու իրու իրիկուան մութը կոխեց ու չօրս զլւ առ  
յելով ապաստանաբան մը կը փնտուէի, յանկարծ ուսիս  
ձեռք մը դպւաւ: Ետիս նայեցայ, ճիշդ այս հագուստ-  
ները կապածէին մը կեցած էր՝ մօտ և որ հալուսց թէ

ո՞վ էի և ի՞նչ բան ունէի գիշերուան այդ պահուն։  
Արցունքոտ աչքերով վզին պլուեցայ և ըսի, քո՛յր,  
գերեզման մը փնտուելու ելած եմ, ժարմինս պարտկելու  
համար . . . . Ու ան՝ գթութեան հրեշտակը, ձեռքէս բըռ-  
նելով ըսաւ «Եկուր աղջիկս եկուր, մեր գտնուած տե-  
ղը ինձ և քեզ պէսներուն թէ քաւարանը և թէ գե-  
րեզմանն է . . . .»

Առաւօտուն այս հագուստները կոնակս անցուցին,  
և անկէ ի վեր կ'ապաշխարհեմ ու կը քաւեմ մեղքս,  
սիրոյ մեղքը։

(Լալով կը բաժնուի)։

### Բ է լ ։ Մ է լ ։

Զինական խաղ մը :

Երբ ձիւնը կը պատէ չորս դին և աղաք՝ նոյն իսկ  
և ծերու համար խօսելով, չեն կրնար բաց օդեայ վայրե-  
առ մէջ անցնել իրենց տաղտուկը, Զինացիները հնարած  
ն սալօնի սիրուն և չիր զրօսանք մը, որ ահա։

Աչք-կապուկը ամէնքդ ալ գիտէք, բայց չինական  
պէ-կապուկը բոլորովին տարբեր է մեր գիտցածէն։  
Հինական աչք-կապուկին մէջ աչք կապել չիկայ, ուրկէ  
տեսակ տեսակ վտանգներ կրնան պատահիլ, այլ բաց  
չքով կը կատարուի ան հետեւեալ կերպով։

Սրահի մը մէկ կողմը ճերմակ մաքուր սաւան մը կը  
նեն վարագոյրի պէս, և արդ սաւանին ետին երկու  
նոմ կը վասի։ Խաղացողներէն ա՛ն՝ որուն աչքը պիտի  
ապէին, բաց ալ քով սաւանին ետին մոմին հակառակ  
ողմը կը կենայ, և միւս ընկերները կարգաւ սաւանին  
տեւէն կանցնին տեսակ տեսակ ձեւեր առնելով, որ-  
էս զի մանան ի ճանչնայ զիրենք։ Մանան, զիրենք  
իտելով երբ ո՛եւ է մէկ ընկերոջը նմանցնէ, բարձրա-  
այն պէտք է անոր անունը տալ և պոռայ, եթէ գը-  
ռաւ՝ խաղը կը շարունակուի ճանցուողը իր տեղը  
նցնելով։

Այս սիրուն և հետաքրքրական խաղը կրնայ շատ  
իւրաւ փորձուիլ, քանի որ խաղը մոմով կրնայ կատա-  
ռւիլ, որ կրնապէս հեռու է ո՛եւ է վտանգ մը սպառ-  
ալէ։



Lms.	Օր.	ՔԵԱՆՈՒՆԻ ԷՎԿ. ԴԵԿՏԵՄԲԵՐ	ԶԻՒԼՅԱՑԻՑ	ՕՐ 31	ՕՐ 29	Տարի:	Գումար
14	1	ՊԵ. Սրբոցն Յակովայ և իրաւաբառոյ վկայիցն :				1	ՀՎ
		ՏՃ. Զիւլյացնէ (օր 29):					
15	2	ՊԵ. Պահք :				2	ՀՎ
16	3	ԵՇ. Սրբոց Հարջն Եգիպտացւոց Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յավիչանոնոյ գրեցւոյն, Յավիչանոնու կարձահասակին, Նեղոսի, Արսէնի, Ռիսիանու, Դաշնելի, Սրապիոնի, Մակարիսոսի, Պիմէնի և այլոց սրբաց Հարց :			3	ՀՎ	
17	4	ՈՒԹ. Պահք: Տոմ Քաղց (օր 30):				4	ՀՎ
18	5	ԵՇ. Սրբոցն Նիկողայոսի և Գրիգորի պանչելառոծ Հայրապետացն. և Միւռանոյ Եպիսկոպոսին:				5	ՀՎ
19	6	❖ ԱԽԲ. Գ. Յիսոնակաց: Բարեկ. պահչոց Սրբոյն Յակոբայ: Յն* Նիկողայոսի Հայրապ. պաշտպանին նաւալարաց: Տօն Անուանն Նիվուա Բ. Կայսեր Ռուսիոյ				6	ՀՎ
20	7	ԲԵ. Պահք: Սրբոցն Մինասայ, Երմոդինեայ, Գրաբոսի, և Կամաւոր տղաստացն Յովիչանու. և Ալեքսիանոսի:				7	ՀՎ
		❖ ԱՌ. Քո. Ժամ 11, ըովէ 12, Հոդի եւ անձեւ:					
21	8	ՊԵ. Պահք: Սրբոցն Կուռնելիսոսի Հարիւրապետին և Շմաւոնի պղբակնենի Բա.ի, և Պօղիկարպոսի Հոյրապետին Զմիւռնից. և Կոսիցին՝ որք ընդ նման կատարեցան: Լո. Թովմայի առաքելցն:			8	ՀՎ	
22	9	❖ ՊԵ. Պահք: Յովութիւն Ա. Աստուածածնի, յԱննայէ: Յայս: Քաղց (օր 30): Զմեռնանուու և արեւոդարձ այծեղջեր, ցերեկն սկանն Երկարիլ և գիշերն կարձանալ: Յն* Յովութիւն Ա. Աստուածածնի: յԱննայէ: ՏՃ. Արիքէ Եվիչիյ արագոնին, որ է սկիզբն քառառուն աւուրց առաջնուն մասին ձմերան, որ Կոչի Գարագը: Զէմէտիք Կիւն տէննիւմին փուրթունաը:			9	ՀՎ	
		❖ ՅԱՅԵԼՉՋԻՒՆ Ժամ 21, ըովէ 45 ՏՅ. Պուրճի ձէիք					
23	10	ԵՇ. Պահք: Սրբոցն Եւստատախոսի, Օքսենախոսի, Եւ գինեսոսի, Ովրեատեսի և Մարգարետոսի: ՏՃ. Գուրզան պայյարար, աւուրս չորս:			10	ՀՎ	
24	11	ՈՒԹ. Պահք :				11	ՀՎ
25	12	ԵՇ. Սրբոցն Յակոբայ Մծնայ Հայրապետին, Մարտրէի Տգնաւորին և Մելիսոսի Եպիսկոպոսին: Յն* Սպիրիդոնի Եպիսկոպոսին: Լո* Ծնունդ Քրիստոսի :			12	ՀՎ	
26	13	❖ ԱԽԲ. Գ. Յիսոնակաց: Լո. Ստեփաննոսի Նախավկային: Տար. Ծննդ. Եօրիկոս Ա. Թագ. Յունատանի. 1845 Ստեփանի Եպիսկոպոսին: ՀԱՐՍԱՆԻՔ:			13	ՀՎ	
27	14	ՊԵ. Սրբոց Հայրապետացն Իգնատիոսի և Ադգէի. և Արդիք:				14	ՀՎ
		❖ Լ. Լ. Ժամ 6, ըովէ 54, Զինարեր աւուրը					
28	15	ՊԵ. Սրբոցն Թէսպոմայ Եպիսկոպոսին, և Թէսպայ վկային. և չորից զինուորացն Բասսոսի, Եւսեբի, Եւ տիքի և Բասիլիետեայ: Լ.ա. Մանկանցն Բեթղեհէմի:			15	ՀՎ	
		ՊԵ. Պահք: Ա. Սրբամ (օր 30):					
29	16	ԵՇ. Սրբոց Կուսանացն Խնդոսի և Դամույի, և Գրերի կոսի քահանային, և Երկուց բիւրուցն:			16	ՀՎ	
30	17	ԵՇ. Սրբոց Կուսանացն Խնդոսի և Դամույի, և Գրերի կոսի քահանային, և Երկուց բիւրուցն:			17	ՀՎ	
31	18	ՈՒԹ. Պահք :			18	ՀՎ	
		ԵՇ. Նախավկայ և ի Քրիստոս Հաւատացեալ անգրա- նիկ թագաւորին Սրբոյն Արգարու, Լ.տ. Յունուար և տարեմուտ 1910 թուականի նոր տոմարին:			19	ՀՎ	
20	19	❖ ԱԽԲ. Ե. Յիսոնակաց :			20	ՀՎ	
31	21	ԲԵ. Սրբոց Քահանայիցն Արբաշամու և Խորենայ. և Անործած բժշկացն Հողմնայի և Դամիանոսի: ՀԱՐՍ:			21	ՀՎ	
		ՊԵ. Սրբոցն Աստուածատրայ վկային:			22	ՀՎ	
		❖ Վ. Ք. Քո. Ժամ 00, ըովէ 5, Խառնակ օդ :					
5	23	ՊԵ. Պահք :			23	ՀՎ	
6	24	ԵՇ. Սրբոցն Դաւթի մարդարէին և Յակոբոյ առա- քելցն: Յն* ձրագալց Ծննդեան: Լո* Յայս. Տեառն:			24	ՀՎ	
		❖ ՈՒԹ. Պահք: Յն* Ծնունդ Տեառն մերզ. և ուտիք է ՀՅ ՀՎ					
7	25	ՈՒԹ. Պահք: Յն* Ծնունդ Տեառն մերզ. և ուտիք է ՀՅ ՀՎ			25	ՀՎ	
		Նոցա մինչեւ ի չորս Յունուարի:					
8	26	ԵՇ. Սրբոցն Ստեփաննոսի Նախավկալապին և առա- ջին մարտիրոսին: Յն* Բ. օր Ծննդեան, և ատ. Ա. Աստուածածնի :			26	ՀՎ	
		❖ ԱԽԲ. Զ. Յիսոնակաց: Յն* Գ. օր Ծննդեան և Ստե- փաննոսի Նախավկային:			27	ՀՎ	
		Տար. Գանի. Մուհամետ Ա.ի ՇահինՊարսից. 1906					
10	28	ԲԵ. Սրբոց առաքելցն Պետրոսի և Պօղոսի :			28	ՀՎ	
11	29	ՊԵ. Սրբոց որդւոցն որոտմոն Յակոբոյ առաքելցն և Յն* Ծննդեան աւետարանչին: Յարեկենդան պահչոց Ծննդեան: Հը. Արամ (օր 30):			29	ՀՎ	
		❖ Ծն. Լ.ս. Ժամ 21, ըովէ 30 Մրցկալոյդ հողմունը					
12	30	ՊԵ. Ա. օր պահչոց Ծննդեան: ՏՃ. Մուհարբէմ (օր 30). և տարեմուտ 1328 թուականի Հիմքիթին :			30	ՀՎ	
		❖ Վ. Ք. Բ. օր պահչոց Ծննդեան :			31	ՀՎ	

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԻՈՐԴՆԵՐԸ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

Սահմանադրական թուրքիա, սահմանադրական կառավարութիւն, սահմանադրական ժողովուրդ և ... սահմանադրական օրիորդ :

Յուլիս տասնեւեցեկի յեղաշրջումը, քաջարի բանակին հեռագիրը՝ միայն քաղաքական ժանգուտ շղթաները չի խորտակեց. ընտանեկան խաւարամիտ լուծին տակ փատող հայ օրիորդներն ալ գտան իրենց աղատութիւնը և հիմնովին փոխուեցաւ իրենց ապրելու կերպը:

Հին ոէժիմը՝ միայն Սառալին, Պապը Ալիին, Ռոսիկանական նախարարութեան պաշտօնատեղին իր աւերին բռնութիւնը չէր գործէր, տուներու, տանիքներու տակ ընտանեկան շրջանակներու մէջ ալ այդ սարսուազդեցիկ լուծը կը տիրապետէր և իր ճիրաններուն տակ կ'ընկէցէր, կը նսեմացնէր կը փատեցնէր վարդ կոկոնները օրիորդները ըսել կուղիմ, որոնք սարուկի մը պէս կը մնային անմիտ և խիստ ծնողաց հսկողութեան ներքեւ, անդիտակ աշխարհի վայելքներուն և անուշութիւններուն որոնց է՞ն զիսնաւորն է՝ ամուսնութիւնը:

Աղջիկ մը, հին ոէժիմի օրով, դատապարտուած էր գլուխ ծուել ծնողացը տաջեւ, օրն ի բուն աշխատիլ առանին գործերով, և ներեւալ չէր իրեն ուել է գաղափար յայսնելու այս կամ այն տղուն վրայ երբ խնդիրը ամուսնութեան շուրջ դառնար: Պարզապէս հեկասիզ կը պոռային երեսին ու ան տեղի կուտար լսելով:

Եթէ ոչ ամէնքը, գէթ մեծամասնութիւնը մեր հայ աղջիկներուն ապուշի պէս կը մեծնային, կուլ և սար-

սախ, հեռու իմացական զարգացումէ, հեռու ազատ գաղափարներէ, մտքերնին թափուր խաւար մը պատած էր կարծես և անբան կենդանիներու պէս կ'ապրէին անհաք ծնողական անտանելի խստութեանց նշաւակ:

Մեր երիսասարդները թող երեխք չի գանդատին ին ոէժիմի օրով քաշած, տուժած և չարչարուած ըլլալնուն համար բռնակալութեան երեսէն, ասղին իրենց քոյրերը նոյն բաները, նոյն դժուարութիւններուն և նոյն տանջանքներուն հնթարկուած էին ընտանեկան յարկին տակ և այս օր եթէ հայ երիտասարդը իր աղատութիւնը կ'երգէ, հայ օրիորդն ալ ոչ նուազ իրաւունք կուտայ ինքզինքին խրախճանական ցոյցերով ողջունել իր ալ աղատութիւնը անմիտ ծնողաց բռնակալութենէն:

Ցնծայ հայ աղջիկ, ցնծայ և ուրախ լեր յայսմհետէ, զի ծնողական բռնապետութիւն կոխեցեր և զիսստութիւն իսպառ վտարեցեր:

Մեր հայ աղջիկները երանի կուտային Հօմ Գոլէնի իրենց սեռակից ընկերուհիներուն որոնք շատ մը առաւելութիւններ կը վայելէին և որոց հանդէպ մէկը չէր կրնար ո՛ և է դիտողութիւն ընել, որովհետեւ անոնք անդիւկան կրթութիւն առած էին, աղատ էին անոնք անդիւկան կրթութիւն առած էին, խօսքին և դատողութեան մէջ, իրենց նիստ ու կացին, խօսքին և դատողութեան մէջ, անոնք տեսակ մը առանձնաշնորհեալներ էին մարդկային ընկերութեան մէջ և որոց մասին ու է բերան չէր կըրնար լարուիր խծծելու իրենց մէկ արարքը այպահնելու բամբասելու: Անոնք՝ Հօմ Գոլէնի աշակերտուհիներն էին և անոնց տրուած էր վայելել հասուկ աղջկան մը բոլոր առաւելութիւնները, անոնք միայն կրնային միմտիս կեանք մը վարել ըստ կամաց, առանց լսելու ո՛ և է դիտողութիւն դուրսէն կամ ներսէն ուրկէ ալ ըլլար: Առանձին պառյաներ, տեղ և տեղ տեսակցութիւն,

ճաշակ, ընթերցում, և այն բոլոր բաները որոնց համար հայ աղջիկը շողիկը կը վազցնէր հեռուէն, անոնց՝ այսինքն անգլիական կրթութիւն առնող օրիորդներու մենաշնորհն էր, կընէին, կըլլային իբր թէ լերան կատուրը բուսնող ծաղիկներ, որոնք ինքնիրեննին կը ծին կը ծաղկին և անցնողը ակնարկ մը միայն կը ձգէ վրանին առանց ո և է գիտողութիւն ընելու:

Այսօր հայ աղջիկը առանց տարիեկան 40 ոսկի ծախքի մը մատնուելու նոյն առաւելութիւններուն տիրացաւ, անիկայ զլեց անցաւ հին ոչժիմի բռնակալութիւնը, անիկա իր անձին, գաղափարներուն և ճաշակն տէրը եղաւ, ազատ անկաշկանդ և անվախ:

Ինչ յեղաշրջում՝ Աստուած իմ, ինչ բարեփօխում: Քանի քանի հայ աղջիկներ այսօր զոհը եղած են ծնողական անմիտ բռնութիւններուն, քանի քանի աղջիկներ փառած են այսօր տուներու մէջ և խամրած սենեակներու չորս պատերուն մէջտեղ՝ զուրկ ամուսնական կենսատու արեւէն, քանի....:

Քանի քանի աղջիկներ կէս մեռել դարձած են, հատնելով, հալելով իրենց սեռին յատուկ զգացումները թմրեցուցած ըլլալնուն համար:

Քանի քանի աղջիկներ դրամօժիտին երեսէն խամրած թոշնած են տանը գոց վարագոյններուն ետին և որոնց կեանքը տանջանք մը, իսկ տունը քաւարան մը եղած է:

Քանի քանի աղջիկներ ծնողական խիստ վերաբերումներու զոհը եղած են, զրկուելով այն բոլոր անուշութիւններէն որոնց սէրը վայելելու տենջը ածխացուցած է իրենց սրտերը տանը անկիւնը:

Վերջապէս ահա սահմանադրութիւնը իր շանթերը տեղացուց նոյն օրինակ մահացու խստութեանց վրայ և

այս օր հայ օրիորդը իր երկաթ վանդակէն խուսափած՝ ինչպէս ըսած է վ. Հիւկօ, ազատ է թեւածելով ընկերուկան աշխարհին մէջ, ուր չիք ոչ ծնողական բռնութիւն, ոչ արգելք և ոչ խստութիւն:

Մեր լրագրողներէն գրեթէ բոլորին փափաքն է և խարաբները և բարձրաստիճան անձնաւորութիւնները և նրեւովիւն ընել, քաղաքական ինչ ինչ գաղանիքներ և իրերու ընթացքը հասկնալու համար: Մենք ուղելով բացառութիւն մը ընել տասոնց մէջ, Յուլիս տասնեւմէկշէն աժիս մը վերջ պատեհութիւն ունեցանք հայ-լայֆ կէն այսօր զերծ պատեհութիւն ունեցանք օրիորդի մը հետ տեսակցիւ, նպատակաւ որ, հասկնանք թէ Սահմանադրութիւնը ինչ աղդեցութիւն ունեցած է հայ օրիորդներու վրայ, օգտակար թէ անօգուտ եղած է ան իրենց ազրեւակերպին համար:

Էնթեւովիւն ըրած օրիորդ՝ որ մեր բարձր դասակարգին կը վերաբերէր, քիչ շատ զարգացած և հըկարգութիւն կը կրանաերէն և անգլիերէն լեզուներուն: Շատ մուտ էր ֆրանսերէն և անգլիերէն լեզուներուն: Շատ վայելու կերպով ընդունեց առաջարկս և պատրաստակամութիւն ցուցուց պատամիանելու բոլոր հարցումներուս:

Սկսնեակը տաք էր և խօսակիցս գեղեցիկ, կարծիմթէ երիտասարդ մը ներշնչելու համար ձմբան այս եղած նակին այդ երկուքէն աւելի փնտուած առաւելութիւն մը կարելի չէր պահանջել: Ուստի խօսքի մտանք:

— Ինչպէս կը գտնաք Սահմանադրութիւնը,

Օրիորդ, ըստ իրեն, իբր առաջին հարցում, չուզելով անժիջապէս նպատակիս համնիլ:

= Սահմանադրութիւնը իր առաւելութիւններով գեղեցիկ և շինիչ չգտնելը լիմարութիւն չէ... քանի գեղեցիկ և շինիչ չգտնելը լիմարութիւն չէ... քանի որ միավետութիւնը տարիներէ ի վեր կործանած էր մեր նիւթական, բարոյական և գիղիքական բոլոր ոյները....:

— Սահմանադրութիւնը պիտի կրնա՞յ արդեօք ձեր սեռին ալ օգտակար ըլլալ . . . :

= Ասոր տարակո՞յս ունիք . . . : Սահմանադրութիւնը որ ազատութիւն ըսել է և անձնիւր իրաւանց պաշտպանութիւն, անշուշտ մեղ համար ալ իր խել մը օգտակար ութիւնները պիտի ունենայ, որոցմէ զուրկ էինք մենք օրիորդներս : Ամէն առաւելութիւն ձերն էր առաջ և պատիւը մենէ անսնց՝ որոնք ամսւսնացած էին, ու մենք օրիորդներս մանկապարտէզի խէզներուն պէս կարեւորութենէ զուրկ էինք մնացած . նոյն իսկ մեր խօսուածքին և հազուստներուն վրայ կ'իշխէին, պատշաճ անպատշաճը իրենք կը տնօրինէին, վերջապէս զմեղ՝ հակառակ մեր յառաջացեալ տարիքին, պէտէի մը տեղ դնելով կը զրէին այն բոլոր վայելքներէն որոց համար թիւն ոտքերնիս գետին չէինք զարնէր, սակայն ի ներքուստ ցաւ կըզգայինք . . . հիմա՞ . . .

— Կը տեսնէք Օրիորդ, ըսի իրեն, թէ ամէն կողմ միքինիներ, լնկերութիւններ, ժողովներ կը կազմուին, կը խորհիք, կամ դիտաւորութիւն ունիք այդպիսի comité մ'ալ դուռք՝ հասուկ օրիորդներդ կալմելու, պաշտպանելու համար ձեր իրաւոնքները, օգտուելով սահմանադրութեան պարգեւած ազատութենէն :

= Կարելի՞ բան էր մեզ համար ետ մնալ և յապացի այդ տեսակ հրահանգիչ և օգտաշատ ձեռնարկէ մը, այսո՛ և նոյն իսկ մեր կանոնագրութիւնն և ծրագիրն անգամ պատրաստած ենք որ ահա, ըսելով քօնսօլին դարակէն կապոյտ ժանեակով կարուած տեարակ մը հանեց, որուն վրայ գրուած էր՝

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱԶԱՏ ՕՐԻՈՐԴԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒԻՆ**  
ու շարունակեց սապէս՝

= Ինչպէս կը տեսնէք, ասիկայ մեր ընկերութեան կամոնագրութիւնն է, մեր ուղղեցոյցը, զոր պատրաստած ենք իրը հիմ զործածելու համար մեր տարագայ գործառնութեանց մէջ, կրնաք կարգալ :

Մաքուր թուղթի վրայ գեղեցիկ սեռին գեղեցկագոյն նուրբ գրովը զրուած տեսրակ մէր, եւ որ կոչում ունիը բարձրացնել Հայ օրիորդներու պատիւը և արժանապատուութիւնը : Ասի ու սկսայ բէլ մէլ կարդալ, և ահա նոյնութեամբ կը ներկայացնեմ :

Ն Պ Ա Տ Ա Կ

« Սահմանադրակոն ազատ օրիորդաց ընկերութեան նպատակն է, բանալ ծնողական և ազգականական գերիշխանութիւնը, և թու չիտալ ո՛ եւ է մրջամտութեան այն բոլոր խնդիրներուն մէջ, որոնց պատուախանաւուութիւնը մեզ կը պատիւնի . . .

« Ազատ օրիորդաց ընկերութիւնը, իր նպատակին կը նաեւ օքնութիւն իր սեռակիցներուն, և ի պահանգից նաև պայքար՝ ծսողական բռնակալութեան դէմ» :

Ալ չի շարունակեցի ընկերութեան նպատակը ծայրէ ի ծայր հասկնալու համար, քանի որ առաջին հատուածներէն իսկ կուանեցի թէ իրենց ծրագիրը և զալափարները շատ գեղեցիկ, թէւ քիչ մը խիզախ, սակայն անները շատ գեղեցիկ, թէւ քիչ մը խիզախ, և կրնար իր օգտակարութիւնը ունենալ ապագային :

Տեարակին ուրիշ մէկ էջը բանալով՝ աւելի հետաքըրացարժ կանոնագրութիւն մը գտայ, որ ահա՝

Պ Ա Յ Մ Ա Ն Ե Բ

1. — Սահմանադրական ազատ օրիորդաց ընկերութիւնը պայման կը դնէ երգնուլ, անվագար և գաղտնի

պահելու համար այն բոլոր ծրագիրները, որոնք հիմք կը կազմեն ընկերութեան, (Ճիշտ ֆռան մասօններու սիսթէմը ուղած են գործադրել ասով):

2. — Ո՛ եւ է օրիորդ մը երբ ուզէ անդամակցիլ ընկերութեան, պարտի տասն և վեց արքեկանէն վար և քսան և հինգէն վեր ըլլալ:

3. — Ըսկերութիւնը իր նիստը կը գումարէ չորեք շաբթի և շաբաթ օրերը, կէս դիշերէն մինչեւ արշալոյս առնապետուհին տունը:

4. — Ընկերութեան մէն մի անդամուհին պէտք է գիտնայ Հայերէն և Ֆրանսերէն անպատճառ, իսկ ուրիշ լեզուներու հմտութիւնը իրեն համար առաւելութիւն մը պիտի սեպուի:

5. — Երբեք ներելի չէ ճոխ թուալէթով ներկայացնալ նիստերուն, բացարձակապէս արգիլուած է բուտան և անուշահատութիւնները eau de cologneէն զատ:

6. — Ընկերութիւնը պատրաստ պիտի ունենայ թանգարան մը ճոխ և այլաղան, ուր ի մէջ այլոց պիտի գտնուին Զօլա, Քաքիլ Մենտէս, և այն բոլոր ֆրանսացի հեղինակներուն գործերը, որոնք բաց զբականութիւնը մշակած են, իսկ հայերէն հեղինակներուն մէջ Յ. Ալփիարի գրուած քնները: Օրաթերթ կարդալը խըստ արգիլուած է, բաց ի ֆրանսերէն Ֆեմինաէն և կլամի Ֆրու-Ֆրուէն:

7. — Այն օրիորդները՝ որոնք կազմով տկար և հւանդառ են, չեն կրնար անդամակցիլ ընկերութեան, քմիչի մը ուրօնը անհրաժեշտ է ընդունուելու համար:

8. — Անդամակցիլ ուզող Օրիորդներուն մէջ եթէ գտնուին անանկներ, որոնք նախապէս նշանուած ըլլալով՝ ո՛ եւ է պատճառաւ ետ եղած է իրենց առաջին

կապը, կը մերժուին, և չեն կրնար ընդունուիլ, անձաւ րակութեան ցայտուն ալացոյցին համար:

9. — Անդամուհիները կրնան և իրաւունք ունին բողոքելու իրենց ընկերուհիներու դուրսը վարած ապօրէն ընթացից համար, որոնք ստուգուելէ վերջ իսպառ կը հրաժարեցու ցուին անդամակցութենէ:

10. — Ամուսնութեան համար ծնողաց կողմէ իրենց եղած դիմումը կամ սպառնալիքը քօմիթէին չի յայտնող և զայն ծածկող Օրիորդները, նախապէս հրապարակաւ կը յանդիմուուին, երկորդին երեք ամիս կը հրաժարեցուցուին, իսկ երրորդ անդամուն կը վտարուին:

11. — Ամէն անոնք, որոնք փափաք կը յայտնեն կամ այն երիտասարդը սիրելու կամ անոր հետ այս կամ այն երիտասարդը սիրելու համար, պէտք է ուղղակի զրամուսնութիւն կնքելու համար, պէտք է ուղղակի զրամուսնութիւն Առանապետուհին, որ ան ալ իր ուր կերպով դիմեն Առանապետուհին, պատճառակի գաղաքարի հարցաիր ձեռքի մը վերջ՝ պարտ ու պատշաճը պիտի տնօրինէ ի շահ անդամուհին:

12. — Բաց բակալավր արգիլուած է ո՛ եւ է անդամուհիի ընկերութեան գաղտնիքները գուրս հանել և գամունիք ընկերութեան գաղտնիքները պատճառի ասոր անոր հետ սիրակամ առանց մասնաւոր հրամանի ասոր անոր հետ սիրակամ առանց մասնաւոր հրամանի մշակել: Աղատ համարձակ սիրելը և սիրահարութիւնը արտօնուած է առ հասարակ, բելը և սիրահարութիւնը երիտասարդը պէտք է ճանշուի ընկերաց նախապէս երիտասարդը պէտք է ճանշուի ընկերութենէն, և անոր վրայօք բարուոք տեղեկութիւն և համոզում գոյացուելէն վերջը միայն կրնայ գործադրուիլ և կամ արտօնուիլ այլ մասին:

Տերապէիս միւս մասերը կարդալու հարկ չի մնաց, ու երբ յագուշ կրթեալ օրիորդին կը նայէի, ու եկզ լօնկին վրայ փռուած մատանիին հետ խաղալով՝ պիշ պիշ ինծի նայեցաւ, ու՝

— Կարծեմ շուարեցաք մնացիք պարոն, ըստ առուշ և հեքնական շեշտ մը դնելով խօսուածքին մէջ, և չէք կրնար կոր ձեր մտքին մէջ ամփոփել թէ՝ Հայ օրիորդները այսքան աղատ, այսքան տարօրինակ ընկերութիւն մը կրնան եղեք կաղմել, Հայ օրիորդները, որոնք հին ուժմիմի օրով ձեր խաղալիքներն էին, տեսակ մը մանրեիներ, զորս կամ թեւերնիդ առած և կամ դէմքրնիդ կը զբօնուիք, անոնց պատիւը ձեր բերնին և հոգին ձեր ափին մէջ առած, ուզածնուղ պէս կը տանջէիք, ձեր քմահաճոյքին նշաւակը ըրած զանոնք, որը սեօներուն, որմէկն ալ գերեղման կը զրկէլիք լանալով մէկուն պարզ այցելութիւն մը, և միւսին վրայ չիթ մը արցունք . . . : Ալ բաւ է, ալ լմացան անոնք, այլեւս Հայ աղջիկը շղթաներէ ազատած թիապարտի մը պէս կուղէ վրէժ լուծել ձենէ, ձենէ, կոյսերու տղրուկներ ձենէ, որովհետեւ մեր անկման, մեր կործանման միակ և միմիակ պատճառը դուք էք պարոններ . . . : Մեր ծնողք ձեզի կը նայէին մինչեւ հիմո, դուք ձեր կեղծ պիրծանքներովք, թռուցիկ և պոռոս ու քլամիներովք լացնելով մեր միամիտ և անբան ծնողաց միտքերը, կը համոզէիք կը թմրեցնէիք զանոնք, և կոյրզկուրայն մեր քոյրերը ձեր թեւը կը մտնային, կատարեալ դեւի մը թեւը, որ գերեղման կառաջնորդէր զիրմնք . . . : Հիմա՞ , անցան ատոնք, դուք չպիտի կը ռնաք հմայել մեր միամիտ ծնողքները, անոնք չպիտի կրնան բռնութիւն բանեցնել մեր վրայ, և ամուսնութեան պէս մանու կենաց խնդիրը լուծողները մենք պիտի ըլլանք, մենք պիտի որոշենք ու մենք պիտի վը ճռենք մեր ապագան ու ճակատագիրը: Եթէ այսօր Յառաջդիմութեան քօմիթէն բռնապետութիւն մը տապալց, Հայ աղատ օրիորդաց ընկերութիւնն ալ ծնողական

բռնակալութիւնը կոխեց: Աղատ է այսօր Հայ օրիորդը աղատ միջոցին մէջ թեւածող թռչունին պէս, որ սէրը կերպէ և ուզած, սիրած, հաճած ձիւղը կընարէ թակելու համար: Հայ օրիորդը այսօրութիւնէ թօթափած է իր լուծը, և անիկա տէրն է իր անձին, իր ճաշակին և իր գաղափարներուն: Մէկ բառով, Հայ օրիորդը պիտի գաղափարներուն է իր սեօնին բոլոր առաւելութիւնները և համաձավայելէ իր սեօնին բոլոր առաւելութիւնները և համաձաւասար ձայն և կարծիք պիտի ունենայ, այն բոլոր խընւասար ձայն և ձեզի յատուկ էին, ձեզի՝ որ զօդիրներուն մէջ՝ որոնք ձեզի յատուկ էին, ձեզի՝ որ զօդիրներուն մէջ՝ որոնք ձեզի յատուկ էին:

Օրիորդը փրփրած էր ալ, յոյզը այնքան տաքցուցած էր գլուխը որ կարծես ճոխ մազերը կը միային, գանկին մէջ եռացող տաք գաղափարներէն: Պահ մը շուարեցայ մնացի և ինքզինքս դէմ հանդիման կարծեցի տօքիօր ան տուալ փաստաբանի մը, որ ամբողջ սէխս մը կը պաշտպանէր: Զմալեցայ, և չի կրնալով զապել դդապաշտպանէր: Զմալեցայ, և չի կրնալով զապել աղատայիտ հերոսուհին առցումներս, ծունդի գայով աղատայիտ հերոսուհին առցեւ՝ չնորհաւորեցի զինք իր աղատ գաղափարներուն համար, մաղթելով որպէս զի տեւական և արդիւնաւոր ըլլայ իրենց այս hors concours ձեռնարկը:

Ու երբ հրամեշտ առնելով իրմէ սանդուխներէն վար կիցնայի դէպի փողոցին դուռը, շալը գլխուն և ցուրտէն կծկուած օրիորդ մը սպասուհին կը հարցնէր,

— Աղատ աղջիկներու ժողովքը հո՞ս է . . . :

— Այս՛, կըսէր սպասուհին, ի՞նչ կայ, ի՞նչ պիտի ընեթ . . . :

— Ոտքը պագնեմ քուրս, չորս տարիէ տէլիխանլը մը կը սիրեմ կոր, սատկելիք մարս պիր թիւոլի խայիլ կոր, եկեր եմ քի խողը չի մտած տէրտս օրիորդ-չրլար կոր, եկեր եմ քի խողը չի մտած տէրտս օրիորդ-ներուն հասկուցնեմ տէ ինձի եոլ մը ցուցընեն . . . :

Ալ կասկած չի մնաց, Հայ օրիորդը հայորդիներուն հաւասար կամ աւելի պիտի աշխատի իր սեօնին ապագայ գաղփնիներուն համար:

Պոտիո . . . :

## ԱԱԼՈՒ ԽԱՐԵՐ

Կը պատահի որ, շատ անգամ երեկոյթներու մէջ պարերը այնքան յոգնեցնեն ներկաները, որոնք մէկ մէկ անկիւն քաշուած կապասեն փրկուրար արշալոյսին իրենց տուները ցրուելու համար:

Պղտիկ սալօնի խաղերը տհա կրնան այդ տաղտուկը  
փարատել : Օրինակ մը :

Երիտասարդ մը կամ օրիորդ մը՝ խնդիր չէ, թող  
առնէ տրցակ մը խազի թուղթ, և դանոնք լաւ մը  
խառնելէ վերջ, օրինակի համար քուբային աղջիկը ը-  
սենք, գոյ թուղթերուն մէջէն զատելով՝ լաւ մը նշան  
ընէ և տրցակը հովանարի պէս բանալով, ըսէ «Թուղթ  
մը քաշէ մէջէն» բայց այնպէս մը ընելու է որ ան-  
պատճառ այդ քուբային աղջիկը քաշէ, այս ալ խազը  
ընողին ձեռքի շուտութենէն կախում ունի: Անգամ մը  
որ քուբային աղջիկը հաւնուեցաւ, պէտք է թուղթերը  
ամբողջ անոր ձեռքը տայ և ըսէ «լաւ մը խառնեցէք  
հաւնած թուղթերնիդ ու մէջը դրէք, կրկին խառնե  
ցէք, և ինձի տուեք»:

Այս գործողութենէն վերջ, խաղը ընողը՝ որ գիտէ  
թէ հաւնուած թուղթը քուբային աղջիկն է, զայն կու-  
մաց մը թուղթերուն վրայ պէտք է դնէ և սեղանին  
վրայ դաց կողմէն, չորս չորս հատ շարելու է, մինչեւ  
առան և վեց:

Անգամ մը որ թուղթերը սեղանին վրայ շարուին, պէտք է ըսէ, « այս չորս կարգերուն մէջէն երկու կարգ հաւնեցէք, բայց ոչ քով քովի կարգերը, այլ մէկ կարգ մը բացը ձգելով » :

Արդ եթէ հաւանած կարգերուն մէջ է քուբային աշ-  
ջիկը, պէտք է ճգել և միւսները ժողվել անժիշտապէս,  
առանց ատեն տալու դէմքին թէ՝ որ կարգը հաւանե-  
ցաւ և որ կարգը վերցաւ։ Մնացածներէն ալ միշտ  
հարցնելով, շարունակելու է խաղը, մինչեւ որ գետնի  
թուղթերէն քուբային ողջիկը և ուրիշ գոյ թուղթ մը  
մնան։ Այն ատեն պէտք է ըսել, «ատանցէ ո՞րը կուղես-  
մատղ վրան դիր»։ Եթէ մատը իր թուղթին վրայ գը-  
րաւ յաղթանակը տարած կըլլաք, իսկ եթէ քովինին վը-  
րայ դնէ մատը, դուք ձեր ձեռքով կը բանաք միւս  
թուղը և խաղը յաջողած կըլլայ։



## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ



Դպրոցական շուտիկ մը, մեծ նպարավաճառի խառնութ մը մասնելով՝ ձեռքին մէջ բռնած թուղթին նայելով կըսէ,

— Ներեցէք պարոն, 8 քաշ խսխլէն 12 դրուշէն քանի զրուշ կըսէ :

Նպարավաճառը գրիչը ձեռք կառնէ ու կըսէ՝  
= 96 դրուշ :

— 24 քաշ շաբարը՝ 3 տասը փարայէն . . .  
= 78 դրուշ :

— 13 քաշ կարագը՝ 16,50 էն . . .


= 214,50, պղափկու . . ., բայց ներեցէք կըսէ նպարավաճառը, ասոնք գնելու չափ դրամ տուած է քովդ մայրիկդ . . .

— Ո՞չ . . . կը պատասխանէ շուտիկը, այսօր թուաբանութեան դասերնիւ այս հարցումներն էին, դիտմամբ ձեզի դիմեցի որ հայիւներուս մէջ սխալած չըլլամ . . .

\* \* \*

— Հայրիկ, կըսէ խելացի պղտիկ մը, ինձ դէմերը նեղանաս կամ սրդողիս, երկու օր քէն կը պահես : Ինչո՞ւ մամային հետ կախ ըրած զիշերներու, նոյն իսկ հետեւեալ առաւօտուն դիրար կը համբուրէ՞ք . . .

— Տղաս, կըսէ հայրը շուարած, քենէ շատ առաջ մամադ սիրած եմ, անոր համար քենէ ալ առաջ անոր կը ներեմ . . .



9th 5 288.

ՀՀ Ազգային գրադարան



NL0139053

14310